№ 9 (175) XVI ՏԱՐԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 1906

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՄԵԾ ՄԱՐԴԱՍՊԱՆԻ ՎԵՐՋԱԼՈՅՍԸ

Երեսնամեայ ներօնականութեան բաղձալի վախճանը մօտենում է, հակառակ ժամանակաւոր և ափսոսալի ապաքինման։ Քաղաքական այդ յոյսը հիմնուած է վստահելի տեղեկութեան վրայ, ստացուած մի լաւատեղեակ աղբիւրից, որ ասում է.

„Սուլթան-Համիդ անց է կացնում իր վերջին ամիսները։ Անձամբ նրան տեսնողները անկարող են թագցնել՝ որ Մարդասպանի կեանքի թելը կտրելու մօտ է։ Նա մի կմախք է, որ հազիւ է շարժւում։ Պրոֆէսսոր Բերգմանի վստահացումները՝ չեն հիմնուած բժշկականութեան, այլ լոկ քաղաքականութեան վրայ։ Պաշտօնական շրջաններում եռուն ծրագիրներ են կազմում՝ ապագայի համար"։

Տխրեցուցիչ է, յիրաւի, և շատ ծանր, որ մարդ-գազանը պիտի մեռնի ա ն կ ո ղ ն ո ւ մէջ, շրջապատուած բժիշկներով և դեղերով, փոխանակ պատառ-պատառ լինելու ռումբի առջև և կամ գլորուելու վրիժառու դաշոյնից։ Վհատեցուցիչ է, որ պատմութիւնը, մանաւանդ բռնապետների տարեգրութիւնը զուրկ պիտի մնայ այդ խրատական և ահաբեր դասից, որ անարդարութեան ներկայ օրերին հանդիսանում է իբրև կրթիչ և սանձահարող միջոց...

Միակ սփոփանքը այդ ցաւալի իրողութեան հանդէպ՝ գուցէ միայն այն է, որ թագակիր գարշանքը, պատմութեան և իր ցեղի այդ եզակի նախատինքը, կեանքի վերջին քայլերն է անում, և պիտի ցամաքի, չքանայ ու շրջապատուած անէծքով գերեզման իջնի, ստեղծելով մի վճռական առիթ, որպէսզի Օ ս մ ա ն ե ա ն կ ա յ ս ր ո ւ թ ի ւ ն կոչուած ճահիճը փոթորկի և ենթակայ մի հիմնական ալեկոծութեան՝ երևան բերի նոր զարկեր, նոր հոսանքներ, փրփուրի նոր դէզեր....

Այդ մրրկաբեր մօտենը, ուրեմն, մօտ է։—Ի՞նչ են մտածում և ի՞նչպէս են ուզում դիմաւորել այդ փ ո թ ո ր կ ի ն կայսրութեան դժգոհ տարրերը.—Նորակազմ թ ի ւ ր ք ա զ ա տ ա խ օ հ ն ե ր ի գործօն խմբերը, փոքր ասիական յ օ յ ն ա զ գ ա բ ն ա կ ո ւ թ ե ա ն քաղաքական ներկայացուցիչները, Ա լ բ ա ն ա կ ա ն դիմադրող շրջանների ղեկավարները, Մ ա կ ե դ ո ն ա կ ա ն դժգոհ և դեռ ևս միմեանց կրծող տարրերը, և բոլոր նրանք, որոնք տանջուած են ու յոգնած արեան ու մահուան քաղաքականութիւնից, բռնութեան այս անվերջ հարուածներից...

Եըլդըզ-Քեօսքը, հարկաւ, ունի իր ծրագիրը։ Եւրոպական դիպլոմատիան, ինչպէս միշտ, վարագոյրի յետևը իր թղթախաղերն է պատրաստում, և Բերլին ու Լոնդոն, Վիեննա ու Պարիզ արդէն պատրաստում են սուլթանական յաջորդին ծրագիրներ ու ավանտներ տալ։ Այդ ակներև է։

Բայց ի՞նչ են անում կամ ի՞նչ պիտի անեն յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն—դ ի մ ա դ ր ա կ ա ն տարրերը, վերածնութեան վստահելի հնոցները, որոնց խօսքն ու կոչը, պահանջն ու սպառնալիքը՝ խոշոր դեր ունեն կատարելու, և գուցէ վճռական դեր։ Ասում ենք՝ վ ճ ռ ա կ ա ն, որովհետև շրջապատող պայմանները աւելի քան նպաստաւոր են և քաջալերիչ.—ցարիզմի մարումն, ռուսական կայսրութեան բոլոր տարրերի քաղաքական անսովոր խմորումն, յեղափոխական մրրկի զարկեր սահմանագլխի վրայ, և նոյնիսկ Իրանի մէջ սահմանադրութեան հովեր, այնքա՞ն երկիւղալի սուլթանի համար, որը յիմար զգուշութիւն ունեցաւ դեռ սրանից 30 տարի առաջ ոչնչացնելու այն „կանունը—էսասին", որը գուցէ միակ պատնէշը պիտի լինէր, թէև ժամանակաւոր, յարաճուն դժգոհութեան և արթնացման ալիքների դէմ...

Ցարմար մօմենտներից մէկը մօտենում է, և հետեւաբար անհրաժեշտ է որ դիրքերը որոշուին։ Ո՞ւր են, ուրեմն, օսմանեան կայսրութեան հետ կապուած յեղափոխական—դիմադրական տարրերի ծրագիրները, նրանց քաղաքական պահանջները, որոնց ներդաշնակելն ու համախմբելը՝ քաղաքական հեռատեսութեան հրամայական պատուէրն է։

Հ. Յ. Դաշնակցութիւնը ունի իր ծրագիրը։

Մակեդոնական մարտական մարմինը՝ նոյնպէս։

Իսկ միւսնե՞րը.—այս կարևոր հարցը պատասխանի է սպասում, որի ուշանալը մահառիթ կը լինի, և անորոշութիւնը՝ աւերիչ։

„ՊՕԳՐՕՄ“

„Երկու շաբաթ է—ասում է Բազելից մեր ստացած գաղտնի նամակը, սեպտեմբեր 8 | 21-ից,—ինչ Թիֆլիսից այստեղ է եկել, ամենագաղտնի յանձնաբարականով, մի լիազօր զինուորական պաշտօնեայ, իբրև թէ խուզարկութիւններ և ձերբակալութիւններ անելու։ Իրօք՝ այլ է նպատակը։ Պաշտօնեայի գալու հետ միասին՝ ոստիկանական շրջաններից բղխել են լուրեր՝ որ իբր թէ Դաշնակցութեան տեղական մարմնի կողմից սպառնական նամակներ են ուղղուել քանի մի սպաների։ Այդպիսի նամակներ կազմակերպական շրջաններից դուրս չեն եկել բայց և այնպէս պրովոկատորները շարունակում են պնդել...

„Երկու օր առաջ, գաղտնի լուր ստացուեց որ սեպտեմբեր 4-ին, միօրեայ քաղաքական ընդհանուր գործադուլի առիթով՝ վերոյիշեալ լիազօր պաշտօնեան՝ միացած տեղական ժանդարմերիայի գլխաւորի հետ՝ հեռագրել է փոխարքային թէ՝ „գործադուլին այժ տուողները հայերն են, որոնք գրգռուած կենտրոնական ժողովի փակումից՝ մտադրուել են ապստամբական ցոյցեր անել. Դաշնակցութեան „դինուած խմբերը աշխատեցին փողոցներում՝ ընդհարումներ „առաջ բերել զօրքի հետ, սակայն շնորհիւ ձեռք առած „միջոցների, այդ օրը խաղաղ անցաւ“։

„Այդ բոլոր պրովոկացիաների և հնարովի տեղեկութիւնների միակ ու գլխաւոր նպատակն է կազմակերպել տեղական պօգրօմ, նման Լեհաստան և Ռուսաստան եղածներին, յեղափոխական նոր փորձերը արեան մէջ խեղդելու համար“...

Յեղափոխական կարևոր կազմակերպութիւնները տեղեակ են այդ դժոխային ծրագրերին—և դրանց հեղինակը՝ Սուլիպին, պատասխանատուութեան կը կանչի ոչ թէ Դումայի, այլ Ռումբի առջև։

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԼԱՀԷՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

(Պաշտօնական դոկումենտ)

„Դրօշակի“ խմբագրութիւնը, յանուն Հ. Յ. Դաշնակցութեան, ուղարկեց Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի և Միացեալ-Նահանգների արտաքին գործերի մինիստրութիւններին մի դիմում՝ հայկական խնդիրը Լահէյի ժողովին ներկայացնելու համար։ Այդ դիմումին կցած էր մի դոսսիէ, ուր ցուցակագրուած են Թիւրքաց Հայաստանում կատարուած բռնութիւնները, 1906-ի առաջին վեցամսեակին։ Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Լէօն Բուրժուային ուղղուած պաշտօնագրի ներկայացնելը յանձն առան մեր բարեկամներ Փր. դը Պրէսանսէ և Պիեր Քէյար։ Ահա այդ թղթի թարգմանութիւնը։

Պարոն մինիստր

Երեք տարի առաջ՝ Ֆրանսական արտաքին գործերու մինիստրին դիմում ըրած էինք Մշոյ շրջանը արիւնոտող դէպքերու վերաբերմամբ, և ուրախ ենք ըսելու, որ մեր այս քայլը թեթև արդիւնք մը տուած էր։

Անկէ իվեր, և հակառակ ամէն տեսակ խոստումներու, Թիւրքաց Հայաստանի մէջ կացութիւնը աւելի ևս անտանելի դարձած է։ Իրերու այս վիճակը մեզ ստիպեց դիմել միջպարլամենտական ժողովին, գումարուած Լոնդոն յուլիս ամսին և, շնորհիւ Ֆրանսայի, Բելգիայի և Միացեալ-Նահանգներու հայասէր պատգամաւորներու միջամտութեան, խորհրդաժողովը միաձայն ընդունեց որոշում մը—պահանջել Լահէյի կօնգրէսէն, որ ստիպէ Թիւրքիան՝ տալու հայերուն, համաձայն միջազգային որոշումներու և մասնաւորապէս Բերլինի Դաշնագրին, այն իրաւունքները, որոնք հանդիսաւորապէս երաշխաւորուած էին։

Այսօր՝ երբ արտաքին գործերու մինիստրութեան գլուխը կը գտնի անձնաւորութիւն մը, որու մարդասիրական մտքերը ծանօթ են և որ Լահէյի Խորհրդաժողովին սկզբնապատճառներէն մին եղաւ, կարծենք թէ մեր պարտականութիւնն է դիմել իրեն և դնել մինիստրութեան առաջ մեր իրաւունքներու կարգադրութեան հարցը։

1895—1896-ի կոտորածները շարունակելու անկարողութեան առջև՝ Թիւրք կառավարութիւնը՝ զինք հարկադրուած տեսաւ իր քաղաքականութեան ուրիշ ձև մը տալ։ Այնտեղ, ուր հայ ազգաբնակութիւնը ուժեղ է, կը ջանայ զայն անօսրացնել և քիւրդ, չէրքէզ և ուրիշ մահմեդական ցեղեր տեղաւորել։ Այս է պատճառը այն խուռն արտագաղթին, որ ներկայիս կ'արտայայտուի Վանի, Էրզրումի և Դիարբէքիրի վիլայէթներու մէջ։

Անլուր հարկեր, հալածանք տեղական վարչութիւններու կողմէն, շարունակական խուզարկութիւններ ամբողջ երկրի քաղաքներու և մինչև իսկ գիւղերու մէջ, մէկ նահանգէն միւսը ճամբորդելու արգելք, հաւաքական բանտարկութիւններ, մտաւորականներու դէմ ձեռք առնուած ամենախիստ միջոցներ, որոշ վիճակի տէր ընտանիքներու սիստեմատիք կործանումն, եկեղեցական, դրոցական և դատական գործերու մէջ հայ համայնքներու տարբական իրաւունքներու ոչնչացումն և վերջապէս երկրի ամենախուլ անկիւններու մէջ մասնակի ջարդեր,—այս ամենը աչքի առաջ ունի միևնոյն նպատակը՝ հայկական նահանգներու մէջ տկարացնել հայ ազգաբնակութիւնը,—միակ միջոցը, սուլթանի կառավարութեան հայեցակէտով, վերջ տալու հայկական հարցին։

Հոս շատ երկար պիտի ըլլար Թիւրքաց Հայաստանի կացութեան ամբողջ պատկերը տալ. բայց թոյլ պիտի տանք մեզի, պարոն մինիստր, ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն դէպքերու վրայ, որոնց ճշգրտութիւնը անժխտելի է, որովհետև անոնք վերստուգուած են մեր կուսակցութեան տեղական կօմիտէներու կողմէն,—կոմիտէներ, որոնք երկրի մէջ 16 տարիներէ ի վեր կը գործեն և բացարձակօրէն ի վիճակի են անցած դէպքերը ստուգելու։

Ատոր կը կցենք դոսսիէ մը, ցայտուն իրողութիւններու, որոնք առաջացած են ներկայ 1906 տարուան առաջին վեց ամիսներու մէջ։ Անհերքելի կերպով անոնք ցոյց կուտան՝ թէ վճռական քայլ մը պէտք է առնել և թէ աղաղակող անարդարութիւն պիտի ըլլար ձգել այս դժբաղդ երկիրը ներկայ վիճակին մէջ։

Կը կարծենք, որ եւրոպական պետութիւններու միջամտութիւնը ազդու միջոց մը պիտի ըլլար մէկ կողմէն կանխելու ոչնչացումը խաղաղ ժողովրդի մը, որ միմիայն աշխատելու և ապրելու իրաւունքը կը պահանջէ, իսկ միւս կողմէն վերջ տալու համար յեղափոխական գործունէութեան, որուն մեր կազմակերպութիւնը բռնադատուած կը տեսնէ զինք՝ Բերլինի Դաշնագիրը ստորագրող պետութիւններու անտարբերութեան և հայ ժողովրդի վերաբերմամբ ի գործ դրուած անորակելի արարքներու պատճառով։

Լաւ գիտէք, պարոն մինիստր, որ հայ ժողովրդի պահանջները՝ խոստացուած բարենորոգումներու գործա-

գրութեան համար՝ ոչ մի դժուարութիւն չեն ստեղծեր, որովհետև Օսմանեան կայսրութեան անդամատութիւնը և ոչ ալ իրեն յատուկ իրաւունքներու շնորհումը չէ որ կը պահանջէ մեր ժողովուրդը, այլ հայկական նահանգներու բոլոր ազգաբնակութեան համար, թէ քրիստոնեայ և թէ մահմեդական, հաւասար տարրական իրաւունքներ. ո՛չ թէ հայ ազգի գերագահութիւն մը, այլ ամբողջ երկրի ընդհանուր բարենորոգումներ. դաշնակցութիւն մը, ուր բոլոր ցեղերը պիտի ունենան իրաւունքի և պարտականութեան հաւասարութիւն։

Մենք մեզ պարտաւորուած կը տեսնենք, ի մեծ ցաւ մեզի, մէկ կողմ թողնել Հայաստանի մի ուրիշ մասի—Կովկասի այրող հարցը, ուր այժմ երկու դիւցի ազգերու միջև մեծ տրամ մը կը խաղացուի, շնորհիւ ռուս կառավարութեան ստեղծած քաղաքականութեան, քանի որ այս հարցը Ռուսիոյ ներքին գործ կը համարուի, բայց Թիւրքիոյ հայերու հարցի միջազգային բնաւորութիւնը մեզ կ'արտօնէ կարծելու, որ մեր ժողովրդի պահանջները կը հիմնուին ոչ միայն մարդկութեան և արդարութեան գաղափարներու, այլ և միջազգային իրաւունքներու վրայ։

Լիայոյս ենք, որ ֆրանսական հանրապետութեան ներկայ կառավարութիւնը՝ հիմնուելով Բերլինի Դաշնագրի և 1895 բարենորոգումներու ծրագրի վրայ, պիտի բարեհաճի նախաձեռնարկ լինել Բերլինի դաշնագրութիւնը ստորագրող պետութիւնները համախմբելու և պաշտօնական ու որոշ եղանակաւ. դնելու այդ հարցը Լահէյի դատարանի առջև, որ շուտով պիտի գումարուի, և կամ մի այլ յարմար դատած որևէ կերպով ստիպելու սուլթանի կառավարութիւնը՝ տալ մեր դժբաղդ երկրին 28 տարիներէ ի վեր խոստացուած արդարութիւնն ու իրաւունքները։

(Ստորագրութիւն)

ՀՐԱՒԷՐ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ

Նամակ „Դրօշակին"

Հայ ժողովրդի եւրոպացի բարեկամները հետևում են լուրած հետաքրքրութեամբ Կովկասում տեղի ունեցող ողբերգական կռիւին։ Առաջին կոտորածների լուրը՝ նրանք լսեցին սխրութեամբ, և բերկրանք ունեցան՝ երբ լուր եկաւ այն յաղթական դիմադրութեան մասին, որ ցոյց տուեցին ասիական բարբարոսութեան՝ ձեր ժողովրդի քաջարի և դիտակից ներկայացուցիչները։

Գոյութիւնը մի կազմակերպուած ոյժի, զօրաւոր մի կուսակցութեան,—ենթակայ յեղափոխականապէս ճանաչուած դիսցիպլինի,—պէտք է նկատել իբրև մի իրական փրկութիւն ոչ միայն այդ կուսակցութեան, այլ նոյնիսկ կովկասեան ամբողջ հայ ժողովրդի համար. և ընդհանուր խառնակութեան մէջ, շաղկապուած արիւնով, Հ. Յ. Դաշնակցութիւնը հանդէս եկաւ իբրև իսկական տնօրէն երկրի մէջ, հանդէպ մի գարշելի կառավարութեան, այսօրուանից արդէն տկար՝ նոյնիսկ չարիք անելու գործում։

Սակայն դեռ կռիւը չը վերջացած՝ ինչպէս երևում է, տատանումներ են նշմարւում մարտիկների շրջանում, և նրանք թուլաբար ենթարկւում են ցաւալի տարաձայնութիւնների, նախ քան յաղթանակը տարուած լինի։ Եւ այնտեղի լրագիրները մեզ հաղորդում են այդ ներքին տարաձայնութեան տխրացուցիչ լուրերը։

Եթէ տասն տարուց ի վեր հայկական դատի պաշտպանութեան համար Եւրոպայում գործ դրած ջանքերը մեզ արտօնում են արտայայտելու մեր կարծիքն ու զգացմունքները, այդ դէպքում մենք թախանցում ենք նրանց, որոնք առաջին անդամ ներշնչեցին երկրի ժողովրդին իր ոյժի գիտակցութիւնը, չ'ուշնչայնել սեփական ձեռքով իրենց գործը, դեռ ևս անաւարտ։

Ցանկալի է խորապէս, որ ոչ միայն բոլոր գործող կուսակցութիւնները համաձայնութեան դան՝ շաղկապած ոյժերով մղելու ընդհանուր թշնամու դէմ սկսած կռիւը, այլ և անհրաժեշտ է,—կենսական անհրաժեշտութի՛ւն,—որ գործօն կուսակցութեան ծոցում, նա որ ամենից ուժգին կերպով արտայայտեց իր կարողութիւնը՝ վերջին կռիւների ընթացքում,—մ ի ա ւ թ ի ւ ն ը չը խախտի նոյնիսկ մի վայրկեան։

Եթէ Թիւրք և ռուս բռնապետութեան հայ զոհերը և անհաւասար կռիւի մէջ ընկած հերոսները կարող լինէին մի վայրկեան դուրս դալ իրենց գերեզմաններից, նրանք աղերսագին պիտի երդուեցնէին իրենց կենդանի եղբայրներին՝ ապարդիւն չը դարձնել արեան անբաւ զոհերը, և մնալ մ ի ա ց ա ծ՝ մինչև յաղթանակի օրը։ Նրանք կ'երդուեցնէին հրաժարուել անձնական մանր ընդհարումներից, կ'երդուեցնէին՝ ժամանակաւորապէս մի կողմ դնել նոյնիսկ սկզբունքային այն հարցերը, որոնք կարող են պառակտումն առաջացնել, և յետաձգել նրանց լուծումը մինչև այն օրը, երբ ձեռք բերուած կը լինի կատարեալ ազատութիւն։ Արդ, այդ ազատութիւնը դեռ ևս գոյութիւն չունի, և նրանք ցարդ բանտարկեալներ են, որոնք տակաւին չեն վերցրել իրենց բոլոր շղթաները։ Եւ թող մինչև վերջնական հարուածը՝ նրանք մնան մ ի ա ց ա ծ՝ ինչպէս եղան անցեալի մէջ։

Այդ է թելադրում բանականութիւնը, այդ է թելադրում այն հարցը, որին նուիրուած են բոլորը՝ վճռած զոհ բերել իրենց կեանքը, և որի առաջ պիտի անհետք չ.քանայ տարաձայնութեան ու պառակտման ոգին։

Եւ այսպէս խօսելով, ես արտայայտում եմ ոչ թէ անձնական մի կարծիք, այլ կարծիքը այն բոլոր ֆրանսիացիների, որոնք բարեկամ են հայկական դատին, և առհասարակ ռուսական յեղափոխութեան ու Թիւրքիայի ազատագրութեան։

1906 սեպտ. ՊԻԵՐ ՔԻՑԱՐ

Խմբագրապետ „Պրօ Արմենիայի"

ՅՈՐԴՈՐՆԵՐ ԵՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՀԱՅԴՈՒԿՆԵՐՈՒՆ

V

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ.

1. Հ ա յ գ ի ւ ղ ա ց ի.—Խմբապե՛տ, այն վայրին մէջ՝ ուր դուն կը գործես, կը պատահի որ կազմակերպուած ժողովուրդին մէջէն որևէ անհատ փախստական կ'ըլլայ և կը դիմէ քեզի։ Պարտական ես ընդունելու այդ հալածուածը. եթէ չընդունես՝ կառավարութիւնը կը ձերբակալէ և անտեղի չարչարանքներ կուտայ, վերջն ալ հինգ կամ տասը տարի բանտարկութիւն կը վճռէ։ Բանտարկեալը կարող է չի դիմա-

նալ չարչարանքներուն և գիտցածը խօսելը Ձեզի բան չեն կրնար ընել, մինչդեռ այդ ձերբակալուածին համար գիւղացիներն ալ կը բռնեն և կ'ըլլայ մեծ խնդիր մը։ Կը պատահի, որ այդ ձերբակալուածներն ալ իրենց հարևան գիւղացիներն ալ մատնեն։ Ուրեմն՝ այդ փախստականները պէտք է ընդունել։ Եթէ զինուորութեան ընդունակ և յարմար մէկն է, անհրաժեշտ է որ առնուազն վեց ամիս խմբին զանազան ծառայութիւններ ընէ և միևնոյն ժամանակ զէնք շարժել սորվի։ Երբ տեսնաս որ լաւ է իր գործերուն մէջ—զէնք կուտաս։ Իսկ եթէ զինուորութիւն ընելու անկարող է՝ կամ քովդ կը պահես, կամ ապահով միջոցներով կը ղրկես արտասահման *։

2. Հայ կին կամ աղջիկ.—Որևիցէ հայ կին մը կամ աղջիկ մը երբ կը վանգաւի և թափառական կ'ըլլայ՝ կառավարութիւնը կ'ուզէ ձերբակալել. ուստի պէտք է բերել տաս զայն քու ապրած վայրդ, յանձնես լաւ տուն մը և ապահովես անոր կեանքը։ Եթէ այդպէս չես կրնար ընել՝ ապահով միջոցներով կը ղրկես արտասահման։ Զ'ըլլայ թէ խումբին հետ պտըտցնես՝—կը խանգարէ քեզ։

3. Տաճիկ զինուոր.—Կը պատահի որ տաճիկ զօրքէն անհատներ դիմեն քեզի՝ իրենց զէնքով։ Ընդունէ՛. եկած բոպէին խուզարկէ վրան մանրամասն, յետոյ զէնքը ա՛ռ քովէն և երեք—չորս ամիս առանց զէնքի քովդ պահէ. այսպէս՝ կը տեսնես թէ ո՛րքան հաւատարիմ է։ Բայց եթէ եկողը քու ապրած շրջանէն ըլլայ, մի՛ ընդունիր և երեսն անգամ մի՛ տեսնար։ Եթէ ընդունես ալ, շուտով զինաթափ ըրէ և հեռացուր արտասահման։

Փախստական թուրք զինուորին ներքին ուժերդ չի յայտնես։ Եթէ այդ զինուորները քանի մը հատ ըլլան՝ կրնան օգտակար ըլլալ կուի ժամանակ քեզի կը բացատրեն տաճիկ զօրքին փողի հնչումները և կ'ըսեն տարուած հրամանները. թէև երբ կառավարութիւնը իմանայ թէ քովդ փողէն հասկցող կայ՝—փողի հնչումները պարոլներու կը փոխէ։

ԳԻՒՂԱԿԱՆ ԴԱՏԵՐ.

1. Ձեր դիրքը.—Պատւիրէ, որ այն գիւղերն ու քաղաքները, որոնք կազմակերպուած են՝ գանգատի համար կառավարութեան չի դիմեն, այլ իրենցմէ ընտրուած մարդոց միջոցով վերջացնեն իրենց դատերը։ Եթէ այդ ընտրելիները անկարող եղան՝ թող ձեզի դիմեն. դուք խնդիրը քննելով և վկաներով ճշմարտութիւնը հաստատելէ ետք, գործը կը վերջացնէք։ Բոլոր դատերը անկողմնակալ կերպով նայեցէք։ Անցեալ վճիռները՝ որոնք տրուած են յեղափոխական ընկերներու կողմէ՝ չի փոփոխէք. ընդհակառակը նոյն մտքով վճռուեցէք և աւելի հիմնաւորեցէք։ Եթէ փոփոխէք՝ ձեր նահատակուած կամ ողջ ընկերները անպատուած կ'ըլլաք և կը վնասէք յեղափոխական անկողմնակալութեան։ Անոնք իրենց խելքով ու խղճով տեսած են այդ դատերը։ Եթէ փոփոխէք՝ ժողովուրդն այլ ևս ձեզի չի հաւատար։

2. Պարտականութիւն.— Անցած ընկերներու գործունէութիւնը առհասարակ չի վատաբանէք։ Անոնց նահատակութեամբն է որ մենք եղած ենք փորձառու և պիտի ըլլանք։ Չիկայ ազգ մը՝ որ իր տաքտիկին մէջ սխալ գործած չ'ըլլայ։ Անոնք ալ իրենց սխալներովն է՝ որ ուղղածեն յետագայ տաքտիկը։

ԶԷՆՔԸ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ.

Հրացաններ.—Երկրին մէջ մէկ փամփուշտը 5 ղրուշ կ'արժէ, մէկ այնալին՝ 16 ոսկի, մէկ բերդանի հրացանը՝ նոյնպէս 16 ոսկի, ան ալ մեր թշնամիներէն կը գնենք։ Եղեր է ժամանակ, որ մէկ բերդանը 18 ոսկիի ալ առնուեր է. հետը տուեր են 30—50 փամփուշտ, անոր ալ կէսը կեղծ, վառօդի տեղ փոշի լեցուցած կամ կապսիւլի վրան շոր դրած և վրան ալ քիչ մը վառօդ լեցուցած՝ որ կրակ չի՛նայ։ Ցեսակ մը հրացան ալ կայ, որ չերքէզները կը շինեն. շեշխանները այնալիի կը դարձնեն ու կը ծախեն 7—8 ոսկիի. ասոնք 5—10 փամփուշտէն աւելի չեն կրակեր, կա՛մ փամփուշտը կ'ուռեցնեն՝ մէջը կը թողուն, կա՛մ կէսը կը կտրեն՝ մէջը կը թողուն։ Բերդան հրացանները՝ որոնք 16—18 ոսկի կ'արժեն, ժողովուրդին ինքնապաշտպանութեան համար լաւ են՝ եթէ փամփուշտ ունենան։ Սահմանի քիւրդերը ռուսական մօսինը կառնեն 30—40 ոսկի. իսկ մէկ փամփուշտը 5 ղուրուշով շատ են առած։

Տաճկական զօրքին ձեռքը գտնուած հրացանը տասնհարուածեան է. ինը փամփուշտ ներքևի խողովակին մէջ կ'երթայ, տասներորդը՝ իսկական խողովակին մէջ կը դրուի։ Այնալիները և ռուսական բերդանները չեն կրնար մրցիլ անոնց հետ. անոնք աւելի հեռուն կը ձգեն։ Բերդանները երեսուն տարի առաջ շինուած հրացաններ են, որոնց մէջի գծերը մաշուած են—գնդակը շատ թոյլ կ'ելլայ մէջէն։ Այնալիները բերդանկաներէն աւելի լաւ են, բայց ասոնք ալ չեն կրնար մրցել տաճկական տասնհարուածեան հրացաններու հետ։ Այդ տասնհարուածեան հրացաններն ալ իրենց կարգին չեն կրնար մրցիլ ռուսաց կառավարական մօսիններուն հետ՝ եթէ փամփուշտ ըլլայ։

Թիւրք կառավարութիւնը տեսնելով օտար ազգերու ունեցած վերջին սիստեմի հրացանները, որոնք 2000 մեթր կը ձգեն՝ ինչ որ կ'ընէ 3000 քայլ, հասկնալով որ իր հրացանները չեն կրնար մրցիլ անոնց հետ, ինքն ալ երկու տարի առաջ գերմանական գործարանի մը յանձնարարեց 300,000 հատ մաուզէր հինգհարուածեան հրացաններ, որոնք նոյնպէս 2000 մեթր կամ 3000 քայլ կը ձգեն։ Ասոնց մէկ մասն արդէն ստացած և բաժնած է Պոլսոյ զօրքերուն և պուլկար—տաճկական սահմանապահ զինուորներուն։

Ի նկատի ունենալով այս ամենը՝ մենք այլևս չենք կրնար մեր զինուորներուն ձեռքը բերդան կամ այնալի տալ. պէտք է այնպիսի զէնքեր տանք՝ որոնք թշնամիին ձեռքի զէնքերէն աւելի լաւ ըլլան և մաքուր, որպէսզի մենք՝ թուով քիչ՝ կարողանանք մրցիլ թշնամուն դէմ։ Ուրիշ խօսքով՝— մեր զինուորները պէտք է զինել Մօսինի կամ Մաուզէրի հրացաններով։

ԱՆԴՐԱՆԻԿ

„Դրօշակի" № 8, էջ 118, երկրորդ սիւնեակ՝ տպուած է „երբ գիծերները լուսնկայ են, "պիտի լինի՝ „ոչ լուսնկայ"։

„ԴՐՕՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՈՒՂԱՐԿՈՒԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

—

ԹԻՖԼԻՍ, սեպտեմբերի 8

Զինուորական շրջանների մէջ յղացուում են խուլիգանական ծրագիրներ։ Պետերբուրգից տրուած օրինակին հետեւելով՝ Թիֆլիս, Բագու, Երևան և այլ վայրերում սպանների այլ և այլ խմբակներ, գաղտնի կամ բացարձակ, սպառնալիքներ են ուղղում հասարակութեան և մանաւանդ յեղափոխական շրջաններին։ Շուկներ կան՝ որ զինուորներին և ոստիկաններին սովորեցնում են՝ դաւեր սարքել հակակառավարչական անձանց և գործողների դէմ։ «Եթէ մի զինուորական զոհուի, մէկի տեղ տասն յեղափոխական կը սպանենք»—այս է ահա նրանց ընդունած նշանաբանը։ Թիֆլիսի զինուորական շտաբը այդ շարժման բոյնն է, և և այնտեղից ցրւում են վերին աստիճանի կասկածելի հրահանգներ զօրանոցներին և նոյնիսկ ոստիկանական մարմիններին։ Այդ դաւի մէջ մաս ունին «ռուս հայրենասէրների» սեանուն խմբերը, որոնք գաղտնի ֆօնդերից նպաստ են ստանում և մինչև իսկ կանոնաւոր ռոճիկ։

—

ԹԻՖԼԻՍ, սեպտեմբերի 19

Միջազգային կռիւը շարունակւում է։ Թատերաբեմը Զանգեզուրն է։ Թիւրք բէգերը և ագիդատօրները խելքի գալ չեն ուզում և շարունակում են խեղճ ամբոխը զոհել իրենց շահերին և մութ դիտաւորութիւններին։ Կառավարութեան երկդիմի, մերթ թոյլ, մերթ գրգռիչ քաղաքականութիւնը անսանձութեանց դուռը լայն կերպով է բաց արել։ Նոյնիսկ Պարսկաստանից բազմանդամ զինուած խմբեր են անցել՝ օգնելու թուրք հրոսակախմբերին։ Հայ յեղափոխական մարտախմբերը մի քանի անգամ խիստ դասեր տուեցին թուրք յարձակողներին։ Ղափանի շրջանում աւելի քան տասն թուրք գիւղեր են քանդուած։ Լուր կայ, որ թուրք սպանուածների թիւը մի քանի հարիւրից անցնում է։ Հայերի կողմից վնասուած են երկու գիւղ, սպանուած են մինչև 30 մարդ։ Թուրքերը այրեցին «Սիւնիք» պղնձագործարանը։ Մահմեդական բնակիչները փախուստ տուեցին դէպի Օրդուբաթի և Նախիջևանի կողմերը։ Տեղական իշխանութեան մի քանի անդամներ փոխեցին և նորերը նշանակուեցին։ Այդ նոր նշանակումները կասկածանքով և երկիւղով ընդունեցին տեղական ազգաբնակութեան խաղաղ մասերի կողմից։ Ցոյս կայ, որ Երևանի նահանգում խաղաղութիւնը չը խախտի, բայց այդպիսի յոյս՝ Գանձակի և Շուշու շրջանների վերաբերմամբ, տարաբախտաբար, գոյութիւն չունի։

—

ԷՋՄԻԱԾԻՆ, Սեպտեմբերի 21

Հայոց կաթողիկոսի կոնդակով գումարուած կենտրոնական ժողովը, հազիւ տասն օր տևելուց յետոյ, փակեց կառավարութեան ծեռքով։ Վաղարշապատի ոստիկանութեան ներկայացուցիչը պահանջեց պատգամաւորներից ստորագրել հետևեալ թուղթը. «Մենք, ներքև ստորագրողներս, տալիս ենք այս ստորագրութիւնը Էջմիածնի գաւառապետին, որ Կովկասի փոխարքայի կարգադրութիւնը Էջմիածնի կենտրոնական ժողովի փակման մասին՝ մեզ յայտարարուած է և մենք պարտաւոր ենք 24 ժամայ ընթացքում, ադմինիստրատիւ կերպով ուղարկելուց խուսափելու համար, հեռանալ Էջմիածնից մեր բնակավայրերը և այստեղից գնալուց յետոյ, օրինական պատասխանատուութիւնից խոյս տալու համար, չը սարքել այլևս որևէ խորհրդաժողով»։ Պատգամաւորները ստորագրեցին հետեւեալ բացատրութեամբ. «Այս ստորագրութիւնը տալով՝ բաղդում ենք այդ կարգադրութեան դէմ, որը խախտում է իւրաքանչիւր քաղաքացու անյողդողդ իրաւունքները, խոսքի և ժողովի ազատութիւնը, ինչպէս և բռնաբարում է իւրաքանչիւր ժողովրդի իրաւունքները, որը միակ կարգադրիչն է իր ազգային-կուլտուրական գործերի»։ Ոստիկանական այդ բռնութիւնը մի նոր անարգանք է թէ հայոց եկեղեցու ներկայացուցիչներին և թէ հայոց ժողովուրդին, որի իրաւունքները բռնաբարուում են միապետութեանը յատուկ անամօթ յանդգնութեամբ։ Դա մի նոր խաբեբայութիւն է կովկասեան փոխարքայի կողմից, որ պարծենում էր հայոց համայնքին տուած ազատութեամբ՝ տնօրինելու իր ներքին գործերը։ Ստօլիպինի կառավարութիւնը չափ չէ ուզում ճանաչել և փշրում է խոսքի ու ժողովի ազատութեան ամենավերջին մնացորդները։ Յեղափոխական նոր ըմբոստացման գաղափարը առատ նիւթ է գտնում ցարական շահատակութիւնների մէջ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՆԱՄԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԷՆ

—

Բանտարկեալներ.—Շուկայի ցոյցը.—Ոստանի գայմագամին հեռագիրը.—Նոր դաւեր.—Արեակու միւդիրի հաղորդագրութիւնը։

Վան, 7 Օգոստոս

Նախորդ նամակով բանտի մէջ կատարուած ոճիրներու մասին գրած էինք։ Բանտի այս դէպքը ժողովրդի մէջ մեծ յուզում առաջ բերաւ։ Բանտարկեալներու մայրերը յարձակուեցան շուկայի քանի մը յայտնի հայ վաճառականներու վրայ և պահանջեցին, որ վերջ տան այս անտարբերութեան և ճար մը խորհին բանտի մէջ տառապող իրենց զաւակներու վիճակի մասին։ Վաշխառու-աղաները ոչինչ յանձն չ՚առին, ընդհակառակը ապաստանեցան Վալիին մօտ և անոր պաշտպանութիւնը խնդրեցին։ Կառավարութիւնը նկատի առնելով տիրող յուզման խորութիւնը և տևականութիւնը՝ զիջողութեան ճամբուն մէջ մտաւ։ Նախ դադրեցուց մինչև այն ատեն շարունակուող ծեծը և բանտային տանջանքները, և թոյլտուութիւն ըրաւ՝ բանտարկեալներուն այցելելը։ Ասոր շնորհիւն է որ բանտարկեալներէն միայն մի հոգի մեռաւ, իսկ մնացեալները՝ թէև վիրաւոր, բայց լաւանալու վրայ են։ Միւս կողմէն բանտի մէջ կատարուած չարագործութեան համար քննութիւն մը կատարուեցաւ և որու հետևանքը երկու պաշտօնեայ իրենց պաշտօնէն զրկուեցան, որոնցմէ մինն է յայտնի չարագործ Հիւսնին։ Սակայն դատավարութենէն վերջ յանկարծակի կերպով վիրաւորներէն 6 հոգի—Վարդգէս, Մուշեղ, Վահան, Յովսէփ, Յովհաննէս և Թիւրք մը՝ գիշերը՝ հարիւրաւոր զինուորներով շրջապատուած՝ աքսոր խրկուեցան։ Թէ ո՞ւր, այդ չ՚իմացանք, և դեռ ա-նոնց մասին ոչ մի լուր։

Թէև Հիւսնին այժմ պաշտօնանկ է, բայց չի դադրիր նոր չարագործութիւններ և մեքենայութիւններ

լարելէ. կ'ուզէ նոր գործ մը կատարել և այդպէս՝ կամ իր պաշտօնին վերադառնալ և կամ աւելի բարձր պաշտօնի տիրանալ։ Մինչև իսկ գիշերները իր արբանեակներով անքուն կը շրջէ՝ յեղափոխականներ ձերբակալելու։ Եթէ ոչինչ ալ չը գտնէ, բան մը կը հնարէ իր նպատակին հասնելու համար։

Յեղափոխականներ ձեռք անցնելը կառավարութեան մտահոգութեան առանձին նիւթ է դարձեր այժմ։ Թէև ուղղակի յայտնի չ'ըներ, բայց ծածուկ ոչ մի միջոց չի խնայեր։ Այսպէս՝ լուրջ ուշադրութիւն դարձուցեր են Աղթամարի վրայ և ինչ առասպելներ ըսէք, որ չը պատմեն այն տեղի մասին։ Անցեալներ Ոստանի գայմագամը գնաց, անձամբ խուզարկեց Մոխրաբերդ՝ պատրուակ բռնելով իբր թէ ֆէդայիներ կան այնտեղ։ Բայց յուսախաբուած՝ ետ դարձեր է և իր քննութեանց արդիւնքը ուղարկեր է կուսակալին յուլիս 11 թիւ և 94 համար հեռագրով մը, որմէ կը քաղենք հետևեալները.

„Ձեր բարձր հեռագրի վրայ՝ նոյն խնդրի մասին մաղ առ մաղ քննութիւն կատարուեցաւ։ Հայ չարագործներու յիշեալ գիւղին մէջ մօտ 300 ոչխար պատրաստի ունենալնին և հոն ձմեռւայ արմտիք հաւաքելնին ապացուցուած է հաստատուած է նաև որ Խնձորուտ գիւղի մէջ զէնքի և ռազմամթերքի գետնափոր դէպօ ունին։

„Այս չարագործ փախստականներէ կազմուած հեծեալ հրոսախմբեր շրջակայք և գիւղեր պտտելով՝ որոշ ծրագրի գործադրութեան միջոցները կը պատրաստեն, բայց տեղ մը հաստատուած չը լինելուն՝ ծրագրի էութիւնը հասկնալ մինչև այժմ հնարաւոր չէ եղած։

„Աղթամարը զէնքի և ռազմամթերքի ամբարի վերածելու և Խենթ Իշխանի հոն կայան ընտրած ըլլալու մասին նշան մը երևցած է։ Ամէն տեսակ քննութենէ և զննութենէ մի վայրկեան ձեռնթափ չենք ըլլար։ Խնձորուտ գիւղի մասին լսած տարաձայնութիւններու հետևանօք պէտք զգացի լուրջ ուշադրութիւն դարձնել դէպի այդ կողմը և յաջողեցայ քանի մը ծանօթութիւններ ձեռք անցնել։ Այս գիւղը շատ անառիկ և շատ անմատչելի դիրքի տէր է։ Բարձր լեռան մը գագաթի մօտ՝ դիրքի մը վրայ հաստատուած է. առջևը կը գտնուի շատ խոր ունկ ձոր մը, իսկ նոյն ձորէն կը սկսի երկարիլ լեռնաշղթայ մը։ Գիւղի ճամբան ձորի կողմէն շատ անկանոն և դժնդակ է. այդ պատճառով ձորի ճամբով փոխադրութիւնը գրեթէ անհնարին։ Եթէ յիշեալ գիւղի վրայ զօրք հանել պէտք ըլլայ, հարկաւոր է գործողութիւնը երկու կողմի լեռներէն կատարել և ձորի երկու կողմերն ալ հսկողութեան տակ առնել. բայց համոզուած եմ որ մինչև նոյն գիւղը հասնելը հրոսակները արդէն լուր առնելով՝ շնորհիւ եղանակի և գիւղի դիրքին կը յաջողին խուսափիլ։ Ուրեմն անհրաժեշտ պէտք մըն է զօրքի փոխադրութեան ուրիշ միջոց մը խորհիլ։ Ուստի համարձակութիւնն ունիմ յայտնելու հետևեալ միջոցը՝

„Քէօչարներէ արօտավայրերու տուրք գանձելու պատրուակի և վերադարձին խաղաղ ժողովրդին գէշութիւն չը պատճառելու քօղին տակ՝ „վայրին վրայ 150 կայսերական զինուոր խրկել և „միաժամանակ հրաման տալ, որ Խիզանի գաւառէն „նոյնպէս զօրք փոխադրուի՝ կանխաւ որոշելով զօր„քերու շարժման և տեղը հասնելու ժամանակը „ու անմիջապէս յիշեալ գիւղը խուզարկութեան են„թարկել, որով հնարաւոր կը լինի գիւղահար անի„ծապարտ չարագործները սատկեցնել և ոչնչացնել։ „Հրամանը ձերն է“։

Գաւաշի գայմազամ Ֆուաղ

Ահա փաստ մը ևս թէ կառավարութիւն ըսուածը ի՛նչպիսի խարդախ միջոցներ կը մտածէ՝ կարծեցեալ չարագործներ ձեռք անցնելու։ Եւ աւելի ևս զզւելի կը դառնայ, երբ խաղաղ ազգաբնակութիւնը պաշտպանելու քօղին տակ ստոր դաւադրանքներ կը սարքէ։ Այո, շատ է պատահեր, որ չարագործներ գտնելու պատրուակով բազմաթիւ գիւղեր, ամբողջ շրջաններ հիմնայատակ կործաներ են, շատ հայեր կոտորեր։ Ո՞վ չը գիտեր որ կառավարութեան նպատակն է դատարկել հայութիւնը ամէն տեղէն։ Ձ'երթանք մինչև Կիլիկիա, չը գնանք մինչև Մուշ, ուր հայ գիւղերը բռնի կը դատարկեն և տեղերնին չէրքէզներ, թիւրք գաղթականներ կը լեցնեն։ Մեր մօտ, Վասպուրականի մէջ, թէև չը կան սիստեմատիկ կոտորածներ, բայց և այնպէս կառավարութիւնը ոչ մի միջոցի առաջ կանգ չ'առներ՝ պատահած տեղը թիւրք կամ քիւրդ մուհաճիրներով լեցնելու։ Ահա այս մասին ցայտուն փաստ մը։ Կուսակալը կոտորածներէ յետոյ դատարկուած գիւղերու մասին՝ Արճակու միւտիրին հարցուցեր է թէ տեղ կա՞յ։ Ահա թէ միւտիրը ինչ կը պատասխանէ դարձեալ հեռագրով, յուլիս 13-էն.

Կուսակալութեան՝

„Զախախ, Վէրլան, Աղջաշ, Ազուրա, Պօղազքէ„սէն և Մանտան գիւղերէն՝ թէև դէպքին Ռուսիա „գաղթողներուն (չըսեր սպանուածներուն) գետիննե„րու և հողերու վրայ բնակեցնել որչափ ալ կարելի „էր, բայց Արասանի աշիրէթէն վիճակնին անծանօթ „զանազան քիւրդեր առաջուց հաստատուած լինելուն „պատճառով՝ այժմ տեղ չը կայ։ Ուստի եթէ ա„նոնք հանուին՝ տեղերնին ուրիշներ հաստատելու „միջոց կայ, միայն թէ վնասակար մարդիկ չը լինել„նին քննելը և արժանն տնօրինելը ձեր բարձր „կամքէն կախեալ է։ Հրաման“։

Արճակի միւտիր Քեամիլ

Այս հազարաւոր նմուշներէն մէկն է „Հայաստանն առանց հայերու“ տեսնելու սիստեմատիկ ջանքերու։

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՓԱՍՏԵՐ

(Բաղուած Մուրէճ եկած նամակէ մը)

ՍԱՄՍՈՆ, յուլիսի 20

Օր չէ անցնում, որ հարկահաւաքների մի վոհմակ չը լցուի գիւղ, նորանոր հարկեր պահանջելու։ „Տուր, առանց հարցնելու ու տրտնջալու“, թէ ի՞նչ հարկ է և կամ ինչո՞ւ համար, այդ միայն հարկահաւաքների գիտ-

նալու գործն է. հային մնում է միայն „լուելեայն հատուցանելու“ դերը։

Ցաճախ են լինում դէպքեր, որ մէկը մեռնում է, միւսը գաղթում և դրանց բոլորի հողերը իսկոյն և եթ գրաւում է թիւրք աղան, արտաքերում բերքը, վաճառում, իսկ հարկահաւաքները այս բոլորի մասին լսել անգամ չեն ուզում և ստիպում են գիւղացուն տալ նաև մեռնողների ու գաղթողների բաժին հարկերը... Ո՞վ կարող է յանդգնել՝ ցոյց տալու հողերը զաֆթող աղային. երկրորդ օրը և եթ նա այլևս կեանք չի ունենայ...

Աւելորդ չէ յիշատակել, որ Մուշի համարեա ամբողջ տարածութիւնը իրօք պատկանում է չորս աղայութեան. նրանք են՝ Գօթանենք, Խալենք, Բերդեկցիք և Զիշնիքլիք։ Իւրաքանչիւր մի աղա անսահման տէր է և իշխող իր բաժին գաւառամասին՝ ունենալով աղա — ձագուկներ գաւառամասի բոլոր տեղերում։ Իւրաքանչիւր բարձր պաշտօնեայ, լինի նա կեղրոնից եկած թէ մի ուրիշ, անպայման ենթարկուած պիտի լինի յիշեալների տրամադրութեան, այլապէս նա չէ կարող պաշտօն վարել։ Այս իսկ պատճառաւ է, որ յիշեալ աղաների մօտիկ բարեկամների հարկերի ընդհանուր գումարը բարձրանում է դարձեալ ռայեայի վրայ—հայ ժողովրդի վզին „Տո՛ւր, տո՛ւր“, առանց հարցնելու, և՛ մեռածի և գաղթածի և աղայի բարեկամ քրդի ու թիւրքի տեղը...

95—96 թւի ֆիզիքական ոչնչացման յաջորդեց տնտեսական անաղմուկ ոչնչացումը։ Մենք քայքայւում, հիւծւում ու ոչնչանում ենք մա՜ս-մա՜ս, դանդաղօրէն։ Ո՞ւր է այս բոլորի ծայրը և մինչև ե՞րբ այսպէս... Ցնտեսապէս ժողովրդին ծծող հարկահաւաքների հետ են շարունակ և մսավաճառ չարչին, և հացահատիկներ գնող սալաֆդարը, և հողեր գրաւող աղան։ Խորամանկ և ճարպիկ են այս բոլոր հարստահարիչները։ Եթէ հարկատուն տալիս է բացասական պատասխան, պատճառ բերելով իր չքաւորութիւնը, մսավաճառը առաջարկում է նրան՝ ծախել իր ոչխարները, սալաֆդարը՝ հացահատիկը, իսկ աղան՝ հողային կալքը... ո՞վ կարող է այս բոլորին մերժել. քանի որ այս բոլորի գլխին կանգնած է պաշտօնական համազգեստով, կարմիր ֆէսով հարկահաւաք սուլթանիկը... Գնա՞ց, թշառ գիւղացու ձեռքից մի բոպէի մէջ դուրս թռաւ բոլոր իր ունեցածը, իր աղքատիկ ապրուստի միակ միջոցը։

Ելքի լաւագոյն միջոցը մի ուէ թիւրքի երաշխաւորութեամբ բանկից փող վերցնելն է։ Բայց դրա հետևանքն էլ լինում է այն, որ ժամանակամիջոցը լրանալուց յետոյ՝ անկարող վճարելու իր պարտքը՝ նա երաշխաւոր թիւրքին է յանձնում որպէս բաժին իր „ոսկու նման“ ցորենը և պահում միմիայն չոր ու սև ԿԼԿԸԼԸ։ այն էլ՝ փողով դարձեալ... Ո՞ւմ դիմել. ո՞ւմ յայտնել այս թշառութիւնների մասին։ Վերջերս հայերին արգիլուեց հեռագրելն անգամ։ Երբ հայը սիրտ է անում յայտնել կամ պատրիարքարան և կամ այլուր, այսպիսի դէպքերում վերցնում են հեռագրի ամբողջ գումարը և իրեն հեռագրողին էլ քշում դէպի տուն կամ բանտ։ Ապրելը այլ ևս անկարելի է այս դժոխքում...

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԽՈՇՈՐ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ՇՈՒՇՈՒՄ

(Կազմակերպական աղբիւրից)

Շուշի, օգոստոսի 11 | 24

Շուշու վերջին ընդհարման մասին, ինչպէս երևում է, անճիշտ և հակասական լուրեր են պտտում։ Ներկայ նամակով ուզում ենք փարատել տարաձայնութիւնները և ներկայացնել իրողութեան ճշգրիտ պատկերը։

Կռիւը սկսողները թուրքերն էին. նրանք նախօրօք ոյժ կենտրոնացնելով քաղաքում, կռուի առիթ տին՝ սպանելով զինուոր Սահակին։ Քննութեան ժամանակ, երբ բացի քննիչից և այլ պաշտօնեաներից, ժողովուած էին և բաւականաչափ հայեր, թուրքերը գնդակներ արձակեցին դէպի հայոց թաղերը։ Հատ-հատ գնդակները շուտով փոխուեցին յաճախակիի, իսկ երբ մերոնք դիրքեր մտան և պատասխանեցին զանազան կողմերից, կռիւը բռնկուեց։ Սկզբից և եթ մենք յարձակողական դիրք բռնեցինք. թոյլ դիմադրութիւնից յետոյ, մի երկու ժամուայ ընթացքում, մենք գրաւեցինք թրքական շատ դիրքեր։ Մենք յարձակւում էինք գլխաւորապէս Ղումղուղի թաղում և դրան կից —Հինգերորդ շրջանում։

Կառավարութիւնը մեր առաջխաղացման լուրն առնելով, իսկոյն զօրք ուղարկեց վրացի օֆիցեր Մաչավարեանիի ղեկավարութեամբ. մի քանի համազարկերից յետոյ օֆիցերը մերոնց յետ դարձրեց գրաւած դիրքերից։ Մաչավարեանիի անխոհեմութեան պատճառով՝ զօրքից երկու հոգի սպանուեցին, որի համար և մնացած ընկերները կատաղեցին նրա դէմ։ Օֆիցերը խոհեմութիւն համարեց անհետանալ դրանից օգուտ քաղելով՝ մերոնք նորից առաջ խաղացին։ Կռիւն աւելի ևս տաքացաւ և կատաղի բնաւորութիւն ընդունեց։ Գօլշչապօվի հրամանով մի քանի անգամ թնդանօթ արձակուեց դէպի թուրքերը, իբրև նախայարձակ եղողների։

Անմիջապէս մարդ ուղարկեցինք Ասկերան և ազդանշանով իմաց տուինք գաւառներին։ Ժամը 5-ին շրջապատեցինք պարսկահպատակ Աղա Իրզի և Ֆատալի Միրզի կողք-կողքի հոյակապ տները, որոնք շինուած լինելով բարձրութեան վրայ, իշխում են հայկական շատ դիրքերին։ Դա մի նշանաւոր դիրք էր թուրքերի համար, որ ամիսների ընթացքում վերածուած է եղել կատարեալ ամրոցի։ Այդտեղից թուրքերը յոյս են ունեցել նորից խուժել և հրդեհել հայկական թաղերը։ Ժամը 6-ից սկսած արդէն հրդեհը լափում էր „Աղա-Իրզան“։ Այդ տան դիրքը այրելուց յետոյ՝ հրդեհաձիգների խմբերը կրակել սկսան թուրքերից գրաւած բոլոր տները։

Ի դէպ մի քանի մանրամասներ մեր կազմի մասին։

Այդ տեսակ խմբեր ունէինք բոլոր շրջաններում։ Դրանք կազմուած են անվախ, համարձակ պատանիներից, որոնք գնդակների տարափի տակ թռչկոտելով՝ դէպի թշնամու դիրքերն էին վազում կրակելու համար։ Բացի հրդեհաձիգներից՝ բոլոր շրջաններում ունէինք և հրդեհաշէջների խմբեր, որոնք իրենց ձեռքի տակ ունէին երկու հրդեհաշէջ մեքենայ, տակառներով ջուր, դոյլեր, քանդելու գործիքներ, բահեր, թոխրեր

և այլն։ Զրմուղներն ամենից վտանգաւոր թաղերումն էին կենտրոնացուած։ Լմեն թաղում ունէինք նաև սանիտարական խմբեր իրենց պատգարակներով, և վիրակապական կէտեր, ուր մշտապէս հսկում էին վիրակապ—վիրակապուհիներ։

Կռիւը սկսելուն պէս՝ ամեն շրջանում ժողովրդից ընտրուած տնտեսական թաղապետները կարգաւորեցին զինուորների համար թաղային ճաշարաններ։ Կուռողներին՝ իր ժամանակին հասնում էր՝ տաք կերակուր, ջուր, թէյ և այլն։ Կուռողների հանգստեան համար միջոցներ էին ձեռք առնուած, և յոգնածները հերթով դադար էին առնում։

Սուրհանդակները կենտրոնից կարգադրութիւններ էին տանում՝ շրջանները և շուտափոյթ տեղեկութիւններ հաղորդում կռուի ընթացքի մասին։ Փամփուշտ բաժանելու համար յատուկ մարդիկ էին կարգուած։ Դիսցիպլինը կատարեալ էր, մանաւանդ առաջի օրը, երբ գաւառացի ուժերը չէին եկել։

Շարունակենք մեր նկարագրութիւնը։

12-ի ամբողջ գիշերը առաջ էինք խաղում։ Յարձակողական եղանք մինչև լոյս. Թրքական թաղերից բաւականաչափ տներ այրուեցին։ Այրուեց նոյնպէս և Ղումլուղի թաղում „Կանաչ մզկիթը“։ Այդ գիշեր կռուում էին մեր կողմից մօտ 115 զինուոր և մօտ 170—200 թաղային կամաւորներ։ Լուսադէմին հրացանաձգութիւնը թուլացաւ, ցերեկը համարեա դադարեց։ 13-ին, կէսօրից անց, գաւառից օգնութիւն ստացանք 120 մարդ. նոր ոյժերը բաժանեցինք շրջանների՝ դիրքերի կարևորութեան համեմատ և կազմակերպեցինք նոր յարձակում ժամը 8-ից սկսած։ Այդ գիշերուայ մեր յարձակումը գաւառացի ուժերով հանդերձ առաջին գիշերուանից աւելի յաջող չ'եղաւ։ Գաւառացի ուժերը, որոնց մէջ կային անպայման քաջ կռուողներ, սովոր դաշտային կռուին, քիչ օգուտ տուին։ Այդ գիշեր շատ բան դարձեալ տեղական ուժերով արինք։ Բոլոր կռուողների ցանկութիւնն էր—հասնել Շէյթան-Բազարին։ Թուրքերը մի քանի կէտերում կռուում էին օրհասական ճիգերով, բաջաբար։

Հրդեհի տարածման խանգարում էր նաւթի հետ ջուր խառնած լինելը։ Հրդեհի ընթացքում չը կարքամու մի նշոյլ անգամ։ Շատ անգամ միևնոյն տունը մի քանի անգամ վառելուց յետոյ՝ կրկին հանգչում էր։ Այդ գիշեր ևս ամենամեծ գործ տեսնողները հրդեհաձիգներն էին, որոնք և եղան ամենից շատ տուժողները։

Կռուում էինք մեր ձեռքի տակ ունեցած բոլոր հնարաւոր միջոցներով։ Մի քանի կէտերից մեր թնդանօթներով ռմբակոծում էինք թրքական թաղերը։ Ունէինք մեր վարպետի պատրաստած 2½ դիւյմանոց երեք թնդանօթ, երկու հատ էլ 3 դիւյմանոց—կրկին մեր վարպետի շինածը, երկու հատ էլ տաճկական 5½ դիւյմանոց հին խոշոր թնդանօթ։ Մեծ գործ են տեսել մանաւանդ ռումբ-ձաւները, որոնցով թէ սարսափ է տարածւել թուրքերի վրայ և թէ բաւականաչափ ջարդ տրւել նրանց։ Գործ են տեսել մասամբ էլ հրթիռները (բակետ)։ Կռուի ամբողջ ընթացքում կրակւել են մօտ 200 տուն, որոնք համարեա բոլորը հատ-հատ են վառել։

Կազակները, զինուորները և օֆիցերները երբեմն մասնակցում էին կռուին, կառավարական թնդանօթները դէպի թուրքերը դարձնելով, առանց Գոլոշչապովի կարգադրութեան։ Զօրքերը դիրքերում աննշան աջակցութիւն են ցոյց տուել մեզ, եթէ չ'ասենք, որ բոլորովին ցոյց չեն տուել։ Զօրքի մի մասը թուրքաց մասումն էր, և անպայման օգնում էր թուրքերին խուլիգան Շերնեավսկու ղեկավարութեամբ։

Այդ գիշերուայ մեր յարձակումը կատարեալ յուսահատութեան էր հասցրել թուրքերին, որոնք գատարկել էին Շէյթան-Բազարը, շատ ընտանիքներ ապաստան էին գտել բանտի պարիսպների ներսը։ Թուրքական մասում տեղի է ունեցել սոսկալի թալան, թուրքերի կողմից։ Կատաղի հրացանաձգութիւնը, յարձակումները, հրդեհումները և մեր թնդանօթների ռմբակոծումը շարունակեցինք մինչև լոյս։ Ցերեկով հրացանաձգութիւնը կրկին դադարեց։ Չնայած մեր յորդորներին՝ մեր կռուողները անտեղի շատ էին կրակում։ Ամբողջ կռուի ընթացքում մեր պահեստից կրակած փամփուշտների քանակը հասնում է շուրջ 80,000-ի։

Օգոստոսի 14-ի առաւօտեան, թուրք ազգեցիկ բժիշկ Մեհմանդարովը յուսահատական տօնով գրած մի աղերսագրով դիմում է գեներալին և հայերից հաշտութիւն խնդրում։ Ութ կէտերից բաղկացած մի պայմանագիր ենք մշակում և թուրքերին ներկայացնում։ Գլխաւոր կէտերն էին. 1) քանդել „Դիքտանղուռուն“ և „Գեօվհար աղայի տուն“ դիրքերը, 2) վերացնել բոյկոտը և սպանուած Սահակի ընտանիքն ապահովել։ Թուրքերը ձգձգում էին պատասխանը, որից յետոյ մեզ համար միանգամայն պարզւեց նրանց դիտաւորութիւնները։ Նրանք ուզում էին օգտւել ժամանակաւոր զինադադարից՝ դրսից օգնութիւն ստանալու յուսով։ Մենք քանի աւելի էինք ընդառաջում նրանց հաշտութեան պայմաններին, նոյնքան նրանք համարձակ էին դառնում։ Գոլոշչապովը նորից մեր առաջ է գնում ուլտիմատումը՝ կամ առաջ չը գալ, կամ թնդանօթնե՞ր...

Մինչև 16-ի գիշերը հրացանաձգութիւնը միայն երբեմն-երբեմն էր լինում, թոյլ կերպով։ Այդ երկու օրուայ ընթացքում մենք մի կողմից քաղաքացիների միջոցով բանակցում էինք թուրքերի հետ, միւս կողմից յարձակւելու պատրաստութիւններ տեսնում, հանգստանում։

16-ի գիշերը կազակների և զինուորների կողմից երկերկու պատգամաւորներ են գնում Գոլոշչապովի մօտ և առաջարկում՝ թոյլ տալ յարձակւելու թուրքերի վրայ։ Գեներալը մի կերպ հանգստացնում է դրանց, բայց այնուամենայնիւ զինուորները մտադրւում են գիշերուայ ժամը 4-ին լինելիք յարձակման միանալ։ Գալիս է ժամը 4-ը. բոլոր շրջաններում սպասում են մեր թնդանօթի ազդանշանին՝ յարձակում սկսելու համար, սակայն դուրս է գալիս, որ զինուորները փոխել են իրենց որոշումը. վճռում ենք կրկին մեր ուժերին վստահիլ, ինչ գնով էլ լինի „Դիքտանղուռուն“ ոչնչացնել։ Մեծ դժուարութեամբ անցք ենք փորում պատի տակից, 57 գր. „Նիւթ“ խոթում անցքի մէջ։ Ներսում դիրք բռնած թուրքերը նկատելով այդ՝ հրացաններով հրհրում, արկղը հեռացնում են անցքից։ Անցնում ենք

կրկին պատի տակը, ռումբեր նետում պատի վրայից և տեղաւորում արկղը պատի տակը, չը կարողանալով անցքի մէջ խոթել. վառում ենք պատրոյքը... առաւօտեան։ Մօտ ժամը 7½-ին, հուժկու դղրդոցով պայթում է դինամիտը, պատի վրայից դարբասի չափ մի անցք բանում. կենդանի մնացած թուրքերը փախուստի են դիմում, իսկ մեր պատրաստ սպասող հրդեհաձիգները մտնում են բացւածքով ու տունը հրդեհում։ „Դիքտանզուռուն“ վերցնելու ժամանակ հինգերորդ շրջանում այրւում են մօտ 10—12 նոր տներ, որից յետոյ հրացանաձգութիւնը դադարում է, մանաւանդ որ դինամիտի դղրդոցը չափազանց զայրացրել էր գեներալին։ Թուրքերը նորից դիմում են վերջինիս և հաշտութիւն աղերսում։ Այդ գիշեր նրանք օգնութիւն են ստանում փահլուլի և կրկծանի արանքով, մեր գիւղացի դիրքապահների չը նախատեսած գաղտնի ճանապարհով։ Օգնութեան հասածների թիւը ճիշտ որոշ չէ. հաշւում են մօտ 2—300։ Քաղաքի միւս անցքերով ներս խուժելու նրանց ցանկութիւնը ապարդիւն է անցնում. քաղաքից դուրս մենք ունէինք թռուցիկ խմբեր, որոնք աչալուրջ շրջում էին ձորերում։

Նորից վերանորոգւում են հաշտութեան բանակցութիւնները և ձգձգւում մինչև 21-ը։ Այդ օրը նկատելի էր որ թուրքերը յարձակում գործելու տրամադրութիւն ունին։ Շերնեավսկին զօրքով եկել էր՝ Աղա-Իրզայի աւերակները հայերից դատարկելու մտադրութեամբ։ Քսան քայլ հեռաւորութեան վրայ կանգնած՝ հայերն ու թուրքերը վիճում էին իրար հետ։ Շերնեավսկին մօտենում է թուրքերին, որին հետևում են բարրիկադի յետևն անցած մի քանի տասնեակ թուրքերի խառն համազարկները։ Թուրքերը այս անգամ դիրք էին բռնել Աղա-Իրզի աւերակների ներքևի մասում, իսկ մերոնք—վերևի։ Երեկոյեան դէմ էր արդէն. բաւական ոյժ կենտրոնացրինք աւերակների ներսը և շուրջը ու ռումբ—ձեռներով փառաւոր ջարդ տալուց յետոյ՝ դուրս քշեցինք թուրքերին և աւերակները նորից ամբողջութեամբ գրաւեցինք։ Այդ տեղից դուրս խրկւած թուրքերին յաջողւում է յետ նահանջելիս՝ աւերակների մէջ մնացած երկու առանձնացած հայ տներ կրակել, բայց մերոնց յաջողւում է անմիջապէս հանգցնել։ Այդ վերջի կռւին՝ թուրքերը երկու կողմից թնդանօթ էլ էին արձակում. մինչև այդ այդպիսի դէպք չէր եղել։

Ըստ երևոյթին պրօվոկատօրները հաւատացրել էին թուրքերին, որ հայերի փամփուշտները հատել են։ Աղա-Իրզան գրաւելուց յետոյ մենք իսկոյն յարձակման դիմեցինք և թուրքերին քշեցինք մինչև իրենց նախկին տեղերը։ Կէս գիշերւանից սկսած՝ մենք վճռեցինք պաշտպանողական դիրքերն ամրացնել որքան կարելի է շուտ և փամփուշտ չը կրակել բոլորովին։ Ժամը մօտ 2½-ին հրացանաձգութիւնը թուլացաւ, իսկ առաւօտեան արդէն „հաշտութեան“ մասին էին խօսում։ Կռւի ամբողջ ընթացքում հինգերորդ շրջանում մերոնք փող էին փչում, որ կռւողների վրայ շատ ոգեւորիչ ազդեցութիւն էր անում։ Այդ շրջանում մերոնք խլել էին թուրքերից մի դրօշակ՝ „Ալիի“ ձեռքը վրան նկարած։

22-ի առաւօտեան հրացանաձգութիւնը բոլորովին դադարեց և այդպիսով վերջացաւ այն կռիւը, որ ընդմիջումներով տևեց ամբողջ 9 օր, և որը կատարեալ պատերազմատեղի էր վերածել ամբողջ քաղաքը։

Օրինակելի կարգապահութիւնը, ժողովրդի համեմատական խաղաղ, սառնարիւն վերաբերումը դէպի կռիւը թալանի կատարեալ բացակայութիւնը հայկական մասում, տարբերում էր այս կռիւը անցեալ տարւայ օգոստոսեան խառնափնթոր կռւից։

ՎԵՐՋԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

ԶԱՆԳԵԶՈՒՐ—ՂԱՓԱՆՈՒՄ

Գորիս, 17—30 օգոստոսի

Հայ-թուրքական ընդհարումները այս շրջաններում շատ սուր կերպարանք են ստանում։ Թուրք բէգերը՝ աւազակախմբերի ղեկավարութեան դերը ստանձնած՝ յամառօրէն շարունակում են իրենց ասպատակութիւնները։ Զանգեզուրի Ցանձաւեր թուրք գիւղի բէգերը՝ հռչակաւոր Սուլթանովները, որ յայտնի են իրենց աւազակութիւններով, ահագին խուժանի գլուխ անցած, երկրորդ տարին է անպատիժ շարունակում են իրենց քաջագործութիւնները։ Եւ երկար անպատիժ մնալուց քաջալերւած՝ այս „հերոսները“ հասցրել էին վերջերս իրենց յանդգնութիւնները աններելի ծայրայեղութեան։

Օգոստոսի 1-ին յարձակում գործեցին թուրք խմբերը Ցամեև հայ գիւղի վրայ, բայց հայերի կողմից դիմադրութեան հանդիպելով, քաշւեցին, թողնելով մի քանի զոհեր։ Օգոստոսի 7-ին նորից յարձակւեցին, այս անգամ տանձատափցոց բինաների վրայ, այրեցին, աւերեցին խեղճ գիւղացիների ամառանոցները։ Համբերել, տանել այս ամենը այլևս անկարելի էր։ Հարկաւոր էր դաս տալ ասպատակիչ թշնամուն, քանդել Սուլթանովների աւազակաբունը, վերջ տալ անպատիժ գողութիւններին, սպաննութիւններին..

Եւ օգոստոսի 8-ին ստիպւած եղան այդ քայլն անել։ Առաւօտեան Մուրադը իր խմբով մօտեցաւ Ցանձաւեր ու Աղանիք թուրք գիւղերին, ուր բնակւում էին վերոյիշեալ բէգերը և ուր կենտրոնացած էին նրանց գլխաւոր ոյժերը։ Մուրադը բաժանեց իր խումբը մի քանի տասնեակների։ Ավօն իր տասնեակով գրաւեց գիւղի աջ կողմի բարձր դիրքը։ Մի ուրիշ տասնեակ Սմբատի ղեկավարութեամբ անցաւ գիւղի ձախ կողմը։ Մուրադը վերցնելով իր հետ Դրօի, Մկրտչի, Կնիազի, Կայծակ Առաքելի և Արսէնի տասնեակները մտաւ գիւղը, նախօրօք պատուիրելով գինւորներին՝ ձեռք չը տալ կանանց, երեխաներին ու ծերերին և չը թալանել ո՛չ մի դէպքում։ Այս կարևոր նախազգուշացումից յետոյ, հնչեց պատերազմական փողը... Ցասնապետները իրենց խմբերով անմիջապէս ընկան գիւղը, մինչդեռ Քեռին երկու տասնեակ ձիաւորներով շրջում էր մօտակայ բարձրութիւնների վրայ, որպէս զի դրսից թուրքերը օգնութեան չը գան։ Երկու գիւղումն էլ հրդեհը սկսեց լափել տները. իսկ դիմադրող թուրք ասպատակիչները ընկնում էին մերոնց գնդակներից։ Եւ ահա՛, նոյն բէգերը, աւազակապետները, որոնք ամբողջ երկու տարի ահ ու սարսափի մէջ էին պահում բոլոր շրջակայ բը-



ՑԱՐԱԿԱՆ ՀԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Հայ-Թուրքական ընդհարումները։—Փախստականների խումբը Հին-Նախիջևանում։

նակավայրերը, կրակի ու արեան մէջ խեղդելով խաղաղ ժողովուրդը, այդ նոյն «քաջերը» ամօթաբար փախչում էին հայդուկների առաջից, թողնելով տուն, տեղ, զէնք ու ընտանիք, չը կարողանալով մի բոպէ դիմադրել հայդուկների գրոհին... Մի ժամ չ'անցած մենք հեռացանք այրւող երկու գիւղերից, տանելով մեզ հետ թշնամուց վերցրած զէնքերն ու փամփուշտները։ Թէ որքան զոհ տուին այդ երկու գիւղի Թուրքերը,—մեզ յայտնի չէ։ Եւ Սուլթանովների աւազակաբունը քանդեցինք՝ առանց մի զոհ տալու մեր կողմից...

—

Օգոստոսի 2-ին, Ղափանում, Թուրքերը յարձակեցին Մելիք-Ազարեանի գործարանի վրայ, այրեցին քարուքանդ արին բոլոր շինութիւնները և սպանեցին 3 հոգի։ Պահապանները երկար դիմադրում էին ներսից, քաջաբար կռւելով թշնամու ահագին ոյժերի դէմ։ Սպանւած է մօտ 40 Թուրք։ Յարձակողները մեծ մասամբ Թրքական Ղաթար գիւղի բնակիչներից էին, որոնք յայտնի են իրենց աւազակութիւններով։ Վերջին ժամանակներս սրանք յարձակւել էին Պէխ հայկական գիւղի վրայ, իսկ մի փոքր յետոյ ոչնչացրել հեռախօսի թելերը՝ գործարանը արտաքին աշխարհից կտրելու դիտաւորութեամբ։ Սրանց միացել էին թարաքամա ձիաւոր լեռնականները, որոնց մշտական ու միակ պարապմունքն աւազակութիւնն է, և որոնց համար ղաթարցիք նախօրօք պատրաստել էին իրենց գիւղում մօտ 80 վրաններ։ Եւ այսպէս միացեալ ոյժերով՝ մի տեղ հայի տաւարն էին քշում, տանում, մի ուրիշ տեղ յարձակում էին գործում որևէ գիւղի վրայ...

Օգոստոս 11-ին հաւաքւած Ղաթար գիւղում՝ նրանք որոշում են ահագին ոյժերով պաշարել հայկական Կաւարթ գիւղը։ Լուրը հասնում է Մուրադին։ Վերջինը վերցնելով իր հետ 20 զինւոր, շտապում է կտրել թշնամու ճանապարհը, և ազատել գիւղը աւերումից։ Կաւարթում միացնելով իր խմբին տեղական զինւորներից մի քանիսին՝ նա վճռում է նախայարձակ լինել, աւազակների այդ բունը քանդելու դիտաւորութեամբ։ Առաւօտեան արշալոյսին, երբ Թուրքերը իրենց ջանբեզարների ժողովում դեռ շարունակում էին կրշռել ու չափել Կաւարթ գիւղի դէմ յարձակւելու ծրագիրը (ինչպէս յետոյ խոստովանւել էին Թուրք կանայք), Մուրադը մօտեցել էր արդէն Ղաթար գիւղին։ Խումբը բաժանւեց երեք տասնեակի։ Մի մասը գրաւեց գիւղի դիմացի ամուր դիրքը, սրանց հետ էին Սմբաթը, Վահանը և տեղական մի քանի զինւորներ։ Մի ուրիշ ամուր դիրք բռնել էին Ստեփանն ու Ալէքսանը՝ տեղացի զինւորների հետ։ Մնացած 16 հայդուկների գլուխ անցած՝ Մուրադը պիտի ներս խուժէր գիւղը։ Դժւար էր իրագործել այդ խիզախ ծրագիրը, որովհետև բացի ղաթարցիներից, ներկայ էին և եկւոր Թարաքամաները... այնուամենայնիւ լեցւած ոգևորութեամբ և բոպէի կարևորութեան գիտակցութեամբ, հայդուկները միաձայն պահանջում են խմբապետից ներս մղտնել գիւղը, վրէժինդիր լինել թշնամուց, ինչ գնով էլ որ լինի... Մուրադը յիշեցրեց իր ընկեր-զինւորներին նրանց ասպետական պարտքը դէպի թոյլերը, դէպի կանայք, երեխաները ու ծերերը։ Ապա հնչեց ռազմական փողը։ Դիրքերից սկսւեց կանոնաւոր կրակը։ Եւ Մու-

բադի խմբակը ներս խուժեց գիւղը։ Մօտակայ տները այրւում էին. կրակը արագօրէն լափում էր շէնքերը։ Գնդակների տարափի տակ, որոնք կարկտի պէս թափւում էին թուրքերի տներից, Մուրադը արագօրէն իջնում էր դէպի գիւղի ներքի մասը՝ սարսափ տարածելով իր շուրջը։ Ահա՛, նա ճեղքեց թշնամու շարքը ու հասաւ գիւղի ներքի մասը։ Նրա հետ են Աւօն, Մկրտիչը, Կայծակն ու Դրօն...

Թուրքերի զեկավարները՝ սկզբում շարած և գլուխները կորցրած անակնկալ յարձակումից, ուշքի գալով կենտրոնացան բարձր տներում, ուժեղ դիրքեր կազմեցին ու սկսեցին գնդակահարել հայդուկներին։ Այս խառնակ միջոցին գնդակահարւեց տեղացի քաջ զինւոր Պապին, որը օրինակելի էր իր հերոսութեամբ... Յանդուգն Կալօն, դուրս գալով դիրքից առաջ էր նետւում և գնդակահարում՝ չը նայած իր ընկերների թախանձանքին և այդ միջոցին մահաբեր գնդակը հասաւ նրան։ Ամ. ընկաւ քաջը՝ արժանի մահով, թողնելով վրէժը իր ընկերներին։ Կալօն Ընդրանիկի ու Հրայրի զինւորներից էր, որոնց մօտ սուրհանդակի պաշտօն էր վարում 1900-ին։ Վերջի րոպէին նա կտակեց իր ընկերներին չը մոռանալ անտէր չը թողնել իր ընտանիքը և երկու երեխաները։ Կռւի տաք ժամանակ վիրաւորւեցին Կայծակ Առաքելը, քուրդ Խեչօն և Եղիշէն, որոնք նոյնպէս առաջ խաղալով դիրքերից դուրս եկած՝ կրակում էին աջ ու ձախ, մոռանալով իրենց կեանքի արժէքն ու գինը։ Սրանց քաջութեան մասին գաղափար տալու համար, բաւական է յիշել, որ օրինակ, Կայծակ Առաքելը վիրաւորւած փորից՝ 5 ժամ անդադար շարունակում էր կռւել...

Կռիւը թշնամու կողմից օրհասական էր։ Կէսօրին, երբ Մուրադը ձիով պտտում էր դիրքերը, խրախուսելով կռւող հայդուկներին, նրա մօտ եկան մի քանի պարսկահպատակ թուրքեր, որոնց ընտանիքները մնացել էին գիւղում, թոյլտւութիւն խնդրելով դուրս բերել նրանց գիւղից։ Կարգադրւեց կռիւը դադարեցնել։ Մուրադը առաջարկեց դուրս բերել գիւղից բոլոր տեղացի ու դրսի կանանց, երեխաներին ու ծերերին, և կէս ժամւայ ընթացքում երկու հայդուկների ուղեկցութեամբ՝ ճանապարհեց սրանց մօտակայ ապահով թուրքական գիւղերից մէկը։ Յետոյ Մուրադը առաջարկեց կռւողներին յանձնել զէնքերը, անձնատուր լինել, խոստանալով խնայել նրանց կեանքը և տւեց 4 ժամ ժամանակ խորհրդակցելու համար։ Այս առաջարկը կրկնւեց երեք անգամ։ Եւ ամեն անգամ թուրքերը մերժում էին անձնատուր լինել, յոյսերը դնելով իրենց դիրքերի անմատչելիութեան, գերակշիռ ոյժերի վրայ։ Եւ չը նայած որ նրանց կռւողների թիւը 120-ից աւելի էր, վերջինները գուցէ և յանձնէին իրենց զէնքերը, եթէ չը լինէր գիւղում կազանցի մի թուրք բժիշկ, որը հակառակն էր բարոզում։ Եւ դիրքից դիրք իրար խրախուսելով՝ թուրքերը յանկարծ կրակ բացին մեր դէմ։ Վեց հայ գիւղացիք զոհ գնացին իրենց անզգուշութեան... Մուրադը մի նոր հրաման արձակեց—ռումբ ու դինամիտով պայթեցնել դիրքերը։ Հայդուկների խումբը մօտեցաւ թշնամուն։ Եւ սկսեց ամենակատաղի կռիւը։ Պայթեցնելով դիրքերը՝ մերոնք անվախ ներս էին խուժում դէպի ամեն կողմ... Աչքի էին ընկնում իրենց քաջութեամբ նա մանաւանդ Գէորգը, Վահանը և Օսկանը։ Կարճ ժամանակում թշնամու բոլոր դիրքերը աւերակ դարձան և մենք մեծ ջարդ տալով թուրքերին, գրաւեցինք ամբողջ գիւղը։ Միակ շինութիւնը, որ չէր մատնւած կրակի, մ ղ կ ի թ ն էր, որը կարգադրւած էր չ՝այրել։

Այս կատաղի կռւի ժամանակ՝ մեր զինւորները չէին մոռանում խմբապետի պատւէրը՝ թոյլերի մասին և ամեն կերպ աշխատում էին չը վնասել կանանց կամ երեխաներին։ Կռւից յետոյ հայդուկները կրակից ազատեցին պատահմամբ գիւղում մնացածներից մօտ 50 հոգի կին ու երեխայ, որոնց մի գիշեր հայ գիւղում պահելուց յետոյ ուղևորեցին թուրքական գիւղ, տալով նրանց մի քանի օրւայ ապրուստի փող։

Մուրադի ռազմագիտական ձիրքի և մի բուռն հայդուկների ոգևորիչ անձնուիրութեան շնորհիւ էր, որ յաջողւեց յաղթել Ղաթարի նման լաւ կազմակերպւած գիւղը ու կոտրել թարաքամաների միացած ոյժերը։ Լրեկոյեան ժամը 8-ին հնչեց դինադադարի ուրախ փողը։ Թշնամին այդ օրը 300-ից աւելի զոհ էր տւել։ Ցասն և հինգ ժամ գրեթէ անընդհատ կռւելուց յետոյ, սոված ու յոգնած հայդուկները իջան իրենց դիրքերից, ժպիտը դէմքերին, ոգևորւած յաղթութեան գիտակցութեամբ։

ԿՈՎԿԱՍ

ԳՈՐԾԱԴՈՒԻ ՇՈՒՐՋԸ

Բագու, 4 | 17 սեպտեմբերի

Համարեա մի շաբաթւայ ընթացքում երկու կարևոր դէպքեր պատահեցին այստեղ։ Տեղական երկու շատ ֆիրմաներում—Նոբէլ և Ռոչիլդ, մօտ երկու ամիս է որ գործադուլ է։ Յունիս, յուլիս ամիսներում մասնակի գործադուլները շա՛տ յաճախ էին պատահում, բոլորն էլ միմիայն տնտեսական պահանջներով, և մեծ մասամբ կատարւում էին բանւորութեան կողմից ինքնաբերաբար, երբեմն չափազանց անկազմ կերպով։ Հայկական ֆիրմաներում հայ բանւորութեան կողմից, իհարկէ միացած օտար տարրերի հետ, կատարւած գործադուլները վերջ ի վերջոյ, աննշան բացառութեամբ, բանւորութեան նպաստաւոր կերպով վերջացան՝ դաշնակցական մարմնի միջամտութեամբը։

Բայց օտար ֆիրմաներինը այդ յաջողութիւնը չունեցան, և անյաջողութեան գլխաւոր առարկան կազմում է գործադուլի օրերի վճարումը, որը թէև Ռուսաստանի, մասնաւորաբար Կովկասի, գործադուլների համար յաճախակի վճարումներով համարեա իրաւունք է կարգ է անցել, բայց այս անգամ կապիտալիստները պինդ կերպով կանգնեցին՝ չը վճարելու համար։ Այդ մասին հայ կապիտալիստները որոշ կոմպրոմիսների մէջ մտան, բայց օտարները՝ բնաւ։ Նախ որ նրանք ամենաուժեղներն են և հնարաւորութիւն ունեն երկար դիմանալու կապիտալի ու աշխատաւորի կռւի մէջ։ Երկրորդ՝ որ օտար ֆիրմաներում աշխատաւորին վերաբերեալ յարմարութիւններ շատ աւելի գերազանց են, և նրանց աշխատաւոր, մանաւանդ արհեստաւոր, մասսան համեմատաբար շա՛տ աւելի գիտակից տարր է։ Դրանց գործադուլները առաջացրել էր և գործազուրկների բիւրօ, որ, թէև առերևոյթս անկուսակցական է, բայց կազմւած է ռուսական Ս. Դ.-ներից։

Այդ ֆիրմաների երկարատև գործադուլները առաջ բերին, ըստ ոգևորութեան, կառավարական միջամտութիւն, ու փոխարքայի կարգադրութեամբ՝ Բագուի ընդհանուր նահան-

դապետը յայտարարեց որ աշխատանքի չեկողներին ճանապարհելու է իրենց հայրենիք՝ Ռուսաստան։ Մինչ այդ, ֆիրմաները յայտարարել էին արդէն իրենց բանուորներին՝ որ մինչև այս ինչ թուական գործի դուրս չեկող բանուորը արձակուած են համարում։ Որոշեալ պայմանաժամը անցաւ և բանուորները աշխատանքի չը գնացին։

Կառավարութիւնն էլ սկսեց իր սպառնալիքը գործ դնել։ Ձերբակալեց գործադուրկների բիւրօի մի քանի անդամներին ու մի քանի ուրիշ բանուորների՝ որոնց համար բանուորների յետադէմ տարրը յայտնած է եղել իբրև ագիտատորներ։ Բարեբախտաբար ֆիրմաները իրենք միջամտեցին նահանգապետի առաջ դադարեցնել ձերբակալումները և չը ձեռնարկել բռնի աքսորանքի։ Կառավարութիւնը լսեց այդ միջամտութիւնը։

Ահա՛ այդ միջոցին ռուսական Ս. Դ.-ի կուսակցութեան տեղական մարմինը միտք է յղանում ընդհանուր քաղաքական գործադուլ սարքել, իբր ցոյց և բոլոր կառավարական միջամտութեան և ձերբակալումների դէմ։ Իր այդ մտադրութիւնը որոշում է իրագործել ինքնուրոյն, առանց նախնական համաձայնութեան միւս կուսակցութիւնների հետ, և օգոստոս 24-ին բաց է թողնում թռուցիկներ՝ յայտարարելով ամսի 25-ից ընդհանուր գործադուլ։ Ամսի 24-ին, թռուցիկները բաց թողնելով հանդերձ, իր ագենտներին ցրւում է նաւթահանքն ու գործարանները՝ յաջորդ օրւայ գործադուլին պատրաստել տալու համար։ Հայ բանուորութեան ամենատուար մեծամասնութիւնը պատկանում է Դաշնակցութեան, և նրանք պատասխանում են այդ ագենտներին, թէ իրենք չեն մասնակցի ո՛չ մի գործադուլի, մինչև իրենց պատկանած կուսակցութեան կողմից չը յայտարարի։ Այդ պարոնները մէկ երկու տեղ թոյլ են տալիս իրենց ստելու, թէ Դաշնակցութիւնը արդէն իրենց հետ համաձայնած է, իսկ մի քանի տեղերում էլ գարմացած բացագանչում են թէ „միթէ բացի իրենցից ուրիշ բանուորութիւն ունեցող կուսակցութիւն կայ“։ Տեսնելով որ իրենց հրամանը շա՛տ յաջող ելք չէ խոստանում, պահանջ են զգում խաբէական միջոցի դիմել և օգոստոսի 24-ի երեկոյեան ժամ 7—8-ի միջոցներում գալիս է նրանցից մէնը—դժբախտաբար՝ հայ—յայտնում է մեզ թէ՝ „թէև իրենք երկու օր առաջ որոշել են այդ հարցի առթիւ դիմել մեզ և Սոց.-Յեղափոխականներին՝ ընդհանուր գործադուլին մասնակցել խնդրելու համար, բայց հնարաւորութիւն չեն ունեցել այդ բանը ժամանակին կատարելու՝ մեր մարմնի անդամներին ծանօթ չը լինելու և չափազանց զբաղած լինելու պատճառով։ Մենք, առանց հարցի էութեան մէջ մտնելու, մերժեցինք առաջարկը, և պահանջեցինք այդ ու համանման ընդհանուր բնաւորութիւն կրող բոլոր հարցերում դիմել անպատճառ գոյութիւն ունեցող կազմակերպութիւններին, ու ընդհանուր համաձայնութեամբ վճռել և իրագործել։

Կրկնելով նոյն պատրւակաբանութիւնները և յայտնելով որ արդէն յայտարարւած է և ժամանակ չը կայ միջկուսակցային խորհուրդ կազմելու, աշխատում էին մեզ համոզել, որ ընդունենք հարցի անհրաժշտութիւնը և համաձայնութիւն յայտնենք։ Մենք տեղի չը տուինք այդ պատրւակաբանութիւններին։ Այնուամենայնիւ, յաջորդ օրը նրանք աշխատեցին նոյնիսկ բռնի ուժ գործ դնել՝ սպառնալով անպատճառ իրագործել ամենի համար անխտիր իրենց ընդհանուր գործադուլը։ Մենք այդ սպառնալիքների և բռնի ուժի դէմ էլ կանգնեցինք, ու գործադուլը տուժեց և վիժեց։

Որովհետև երևոյթը շա՛տ տգեղ էր, մենք պահանջ զգացինք մի թռուցիկով պարզել իրողութիւնը հասարակութեանը, մեղադրել Ս. Դ.-ների տեղական մարմնի վարմունքը և հրաւիրել նրանց դատի։ Վարկաբեկւող այդ մարմինն էլ իր կողմից մի թռուցիկ բաց թողեց ըստ իր վաղեմի սովորութեան՝ անւանելով մեր վարմունքը յետադիմական, բուրժուական և այլն։

Յարաբերութիւնները այս դրութեան մէջ էին, երբ տարբեր մէկ նաւաստիների դաշտային—պատերազմական դատարանի յանձնելու և դատապարտելու մասին լուրեր տարածուեցին։ Դովային տեղական պահեստից վերջերս դաղութիւն էր կատարւել. այդ տան և մէկ նաւաստիները քննած վիճակում էին գտել, ուստի և անմեղներ էին։ Ահա այդ նաւաստիներին մահւան պատիժ էր սպառնում՝ յանձնելով գործը դաշտային—պատերազմական դատարանին, որը, ըստ կառավարական վերջին կարգադրութեան, յեղափոխութեան դէմ կռւելու իբրև ապահով միջոց՝ ընդհանրացւած է Ռուսաստանում։ Այդ դատարանի դէմ հասարակական բողոք արտայայտելու համար, այս անգամ նոյն Ս. Դ.-ները պահանջ են զգում դիմել բոլոր կուսակցութիւններին, և երեք օր առաջ կազմւած Միջկուսակցային խորհուրդը միաձայնութեամբ որոշեց միանգամից ընդհանուր գործադուլ անել։ Որովհետև դատ ու դատաստան շատ անգամ դադարի է կատարւում և միայն վճիռը իրագործելուց յետոյ՝ յայտարարւում, ուստի ենթադրելով որ այս մի երկու օրւայ մէջ դատը տեղի կունենայ անպատճառ, որոշեց այսօրւայ համար (4 սեպտեմբերի) կատարել ծրագրւած գործադուլը։

Եւ այսօր տեղի ունեցաւ այդ ընդհանուր գործադուլը ամենաջղկերպով՝ համարեա առանց միջադէպերի։ Կարելի է ասել, կեանքը մեռած է ամբողջ քաղաքում և իր հանքային ու գործարանական շրջաններում։ Գործադուլը յայտարարող թռուցիկը բաց էր թողած բոլոր կուսակցութիւններից կամ կազմակերպութիւններից ստորագրւած։ Լուր կայ թէ գինւորները հակրութեամբ են վերաբերւել։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՍԵՊՈՒՀ
(Արշակ Դազարոսեան)

Արժանաւոր գինւորներէն մէկն էր նա։—Վանեցի արհեստաւորի զաւակ՝ ծնած Պոլսոյ մէջ, 1880 թուականին։ Կետրոնական վարժարանը ուսումն ստանալէն վերջ՝ չորս տարի է վեր կը յաճախէր բժշկական վարժարանը, ուրկէ շրջանաւարտ ըլլալու երկու տարի մը նացած էր։ Յիշեալ վարժարանն աւարտելու գլխաւոր նպատակն էր՝ կառավարական պաշտօնով հաստատուիլ հայաբնակ գաւառի մը մէջ և այդ պատրւակաւ „գործի“ պաշտօնեայ մ՚ ըլլալը

Խրոխտ նայւածքն ու քալւածքը իր կամքի ոյժը կը մատնէր, իր յաղթանդամ ու հուժկու կազմւածքը կը պարփակէր սիրտ մը բարի, սիրող ու զոհւող, որով ծանօթներուն ու ընկերներուն հմակրանքը գրաւած էր։

Իր ընտանիքի միակ յոյսն ու ապագայ միխիթարութիւնն ըլլալու զգացմունքը կրելուն հետ միատեղ՝ նա միշտ կ՚ըսէր՝ „փոքր ընտանիքը մեծ ընտանիքին զոհաբերել պէտք է, եթէ այդ՝ կը պահանջէ գործը“։ Եւ զոհաբերութեան առիթը շուտով ներկայացաւ։ 16 տարեկան հասակին մտաւ „Կամք“ խումբին մէջ և շուտով անոր ամենալաւ գործիչներէն մին եղաւ։ Մինչև իր եղեռնական մահը պատասխանատու գործեր ստանձնած ու երկու անգամներ ալ բանտ մտած էր։ Բայց երրորդ անգամ բանտն անոր գերեզմանն եղաւ։

Սուլթանի մահափորձէն ետք, Պոլսոյ կազմակերպական գործերը վարող տեղական կոմիտէի անդամակցութեան կոչւեցաւ և 1905 սեպտեմբեր 4-ին, երբ կարևոր գաղտնիքներ ու կեղծանուններ պարունակող նամակ մը կը փոխադրէր, Գարագէոյի կամուրջին վրայ, բազմաթիւ ոստիկաններ յանկարծակի յարձակւելով՝

կը բռնեն Սեպուհը և կ'առաջնորդեն բանտ։ Կարևոր թուղթ էր բռնածնին. հրաձեւեցաւ կառավարութիւնը, կարծելով թէ Պոլսոյ կազմակերպութեան բանալին գըտած էր։ Եօթ օրւան բանտարկութեան մէջ, անլուր տառապանքներ, դժոխային չարչարանքներ—թրքական յայտնի տանջանքները չը կրցան Սեպուհի յամառ կամքըն ու կորովը տկարացնել։ Ու գիշեր մը, բանտի խոնաւ նկուղներուն անկիւնը, խոր լռութեան ու խաւարի մէջ՝ երբ պաշտօնեաներ իրենց սադայէլական ու դըժոխային հնարքներով անոր՝ յեղափոխական կնիքով կողպւած բերանէն բառ մը կորզել կ'ուզէին, Սեպուհ կատղած, փրփրած՝ յարձակեցաւ զինքը տանջող դահիճներու վրայ, որոնք սւինի հարւածներու տակ անողորմ կերպով նահատակեցին բանտարկեալը...

Հետեւեալ առաւօտ երիտասարդ զոհի սառած դիակը, այլանդակւած ու վէրքերով ծածկւած՝ մայր եկեղեցիին յանձնւած էր։ Եւ հէգ մայրն ու քոյրը, և անոնց հետ ընկերները կը համբուրէին գաղափարի զոհի նշխարները։ Պարգև Նրա երկաթեայ կամքին։

ՄԻԽԱՅԻԼ ԳՕՑ

Քսաներկու տարուց ի վեր յեղափոխութեան մշակ էր նա, անխոնջ, անդադրում, հեռու հիասթափումից։ Ծագումով հրէայ, զաւակ հարուստի, բարեկեց ընտանիքի, նա դեռ 18 տարեկան հասակում „մնաք բարով" ասաց խաղաղ կեանքին և նետւեց կռւի ասպարէզը, կռիւ վճռական, լի արկածներով։ Առաջին քայլերից արդէն բռնւեց, ենթարկւեց շղթայակապ կեանքին, դատապարտւեց մահւան, քշւեց Սիբիր, ուր մնաց ամբողջ 16 տարի...

Հազիւ 34 տարեկան էր, որ ազատւեց Սիբիրից, տանջւած, հիւանդ, գնդակի վերքը մէջքին, և ապաւինած Եւրոպա, գլխաւորապէս հիւրընկալ Շվեցարիա՝ ամբողջապէս նուիրւեց գրական-կազմակերպական բարդ աշխատանքներին, իբրև գործօն և ականաւոր անդամ „Սոցիալիստ-Յեղափոխական" մարմնի։ Ցարի գործակալները նրան այստեղ էլ հանգիստ չը տւին։ Մի քանի տարի առաջ, Իտալիա եղած միջոցին, Պլեվէի խնդիրքով բռնւեց և բանտարկւեց՝ իբրև „մանակից Սիպիագինի սպանութեան", սակայն ռուս կառավարութեանը չը յանձնւեց, շնորհիւ Եւրոպայի մէջ բռնկւած հասարակական բուռն բողոքի։

Վերջին երկու տարին, Սիբիրում ստացած վերքի բորբոքման պատճառով՝ Գօցը՝ համարեա հաշմանդամ, ստիպւած էր անկողնուն ծառայել—սակայն նրա գլուխը, դեռ ևս թարմ և ուժեղ, շարունակում էր աշխատել, հրահանգել, յորդորել, սիրտ տալ գործակից-ընկերներին՝ շարունակել քաղաքական տէրրորի գործը, որի ամենաթունդ ջատագովն էր նա՝ կուսակցական շրջաններում։

Երախտագէտ ընկերները և գաղափարակիցները, իբրև յարգանք, կազմակերպեցին շքեղ յուղարկաւորութիւն, որ տեղի ունեցաւ Ժընեվ, սեպտեմբեր 16-ին։ Խուռն բազմութիւն. 80 պսակներ, մեծ մասը քաղաքական այլ և այլ մարմիններից. աւելի քան 15 ճառեր, ի միջի այլոց—Սոցիալիստ-Յեղափոխականների կենտրոնի կողմից, խօսողներն էին Զայկովսկի, Ռոբանովիչ և Լաղարեվ. Սիբիրականների կողմից՝ Վալերիան. Ժընեվի սոցիալիստների կողմից՝ Սիդ, կոմմունիստների շրջանակի կողմից՝ Դր Վիսս, իտալական սոցիալիստների կողմից՝ Բարդ. Հ. Յ. Դաշնակցութեան կողմից՝ Մալումեան. Լիոնի սոցիալիստների կողմից՝ պրոֆեսոր Լեվի. ռուս գիւղացիների միութեան կողմից՝ Ամֆիտիատրով. անարխիստ-կոմմունիստների կողմից՝ Ալէքսանդր Լայլն։ Ճառերից յետոյ կարդացւեցին ցաւակցական հեռագիրներ՝ ստացւած, ի միջի այլոց՝ Բրիւքսէլի սոցիալիստական միջազգային բիւրո'ի կողմից՝ Վանդերվելդի ստորագրութեամբ, գերմանական սոցիալ-դեմոկրատների կենտրոնական մարմնից՝ ստորագրութեամբ Բեբելի և Զինգերի, Լոնդոնի սոցիալ-դիմոկրատական դաշնակցութեան կողմից, Ֆրանսիական սոցիալիստների գլխաւոր կոմիտէից։—Բոլոր ճառախօսները միաբերան շեշտեցին՝ որ պէտք է անելկիւղ և անսայթաք շարունակել յարիզմի դէմ սկսած ահեղ կռիւը—լաւագոյն յարգանքը՝ թարմ գերեզմանին։

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

„Դրօշակի" յունիսի համարի մէջ տպագրեցինք մի պաշտօնագիր՝ „Երեսուն հինգ տարի առաջ" վերնագրով, հետեւեալ նկատողութեամբ. „Սա մի պաշտօնական փաստաթուղթ է, գրւած դեռ այն ժամանակ, երբ հայկական յեղափոխութիւնը չէր պարզել իր վարտական դրօշը, եւ օրւայ նշանաբանը՝ դեռ ամենահպատակ աղերսանքն էր ու ամենախոնարհ խնդրւածքը։ Պաշտօնական թղթին յատուկ մեղմութեամբ խմբագրւած այս „Տեղեկագիրը", որ 70-ական թւականների հայկական տանջանքների դիւանագատական հափաւոր արտայայտութիւնն է եւ պիտի մնայ իբրեւ անհերքելի պատասխան ու վճռական հարւած այն քաղաքական շարամտութեան, որը ամբարտաւան յամառութեամբ, նոյնիսկ մեր վշտի ծանրագոյն րոպէներին, փորձում է հայկական հալածանքի պատճառը հայկական յեղափոխութիւնը համարել, մինչդեռ այդ հալածանքի սկիզբը շատ հին է եւ շատ վաղուց ծեռակերտւած"։ Այս անգամ զետեղում ենք մի այլ դոկումենտ, գրւած երեսուն տարի առաջ եւ ապացուցող նոյն տեսակէտը։

Բ. ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ

Ի Խորհրդարանական Յանձնախմբէ առ Ազգային Ժողովն

Ըստ որոշման Ազգային Ժողովոյդ՝ որ ի նիստ 10 սեպտեմբեր 1876, Խորհրդարանական Յանձնախումբս՝ գաւառական հարստահարութեանց նախորդ ընդհանուր Տեղեկագրի Թւականէն յետոյ պատահած հարստահարութիւնները տեղեկագրելու համար՝ փութաց ի քննին առնուլ Պատրիարքարանի թագրիրներն ու արձանագրութիւնքն, և՝ իւր պաշտօնն ըստ կարելւոյն կատարելով՝ սոյն երկրորդ տեղեկագիրը բերել պատկառելի ժողովոյդ։

Ազգային Ժողովով պատրաստւած յիշեալ ընդհանուր տեղեկագիրն, որ 1872 փետրուար 18-ի նիստին ատենագրութեանց մէջ արձանագրեալ է, առաջին անգամ նոյն տարւոյ ապրիլ 11 Թւականին մատուցւած է Բարձրապատիւ Եպարքոս Մահմուտ Նէտիմ փաշային։

Ազգային Պատրիարքարանի արձանագրութիւնք յայտնի ցոյց կուտան թէ՝ այս տեղեկագիրն ակնկալեալ արդիւնքը չէ արտադրած։ Թէև Պատրիարքարանն ասոր պատճէնը յաջորդ Եպարքոսներուն ա'լ մատուցած և Ազգին խնդիրը կրկնելէ չէ դադրած։

Հետեւեալն՝ յիշեալ տեղեկագրին Թւականէն ի վեր հարստահարական խնդրոց վրայ Պատրիարքարանի կողմանէ առ Բ. Դուռն մատուցեալ Թագրիրներուն կարևոր մասին հաւաքածոյն է, Թւականի կարգով, և անոնց մի քանիին ամբողջ պատճէններն ու միւսներուն ալ համառօտութիւնը կը պարունակէ, ի բաց Թողլով համանման խնդրոց վրայ առ գաւառաց կուսակալս ուղղեալ բաւական Թւով գրութիւններն, որք քանի մը

մասնաւորութիւններէ զատ մեծագոյն մասամբ դարձեալ ապարդիւն մնացած են։ (Բերւած են փաստեր).

Հոս կաւարտի Պատրիարքարանին թագրիրներուն հաւաքածոյն, որոյ մէջ չեն գաւառաց ոմանց մէջ վերջին օրերս տեղի ունեցած մի քանի հարստահարութիւնք. ընդ որս և Եօզղատ գաւառի Սարը Համզա գիւղի մէջ Բետիֆ զօրաց կողմանէ ի գործ դրուած բռնաբարութիւնք և անիրաւութիւնք, որք տեղական Ազգային Վարչութենէն հասած պաշտօնական հեռագրով ստուգուած են։ Պատրիարքարանն այս հեռագիրն հաղորդած է Բ. Դրան և բերանացի բանակցութեան մտած ընդ այն։

Առանց այս վերջին անցից բացատրութեան մտնելու, տեղեկագրեալ 38 իրողութիւններն՝ որք պաշտօնական բանակցութեան նիւթ եղած են՝ բաւական կը կարծեմք հաստատելու թէ գաւառացի մերազնէից հաբրստահարեալ վիճակն ինչ որ էր յառաջ, ընդհանրապէս նոյն է և այսօր, հակառակ մեր ազգովին տրտնջանաց և գանգատանաց, որք անընդհատ մատուցուած են Կայսերական Կառավարութեան, թէև Բ. Դուռն իր աղդու հրամանագրերովն, որոց մէկ քանիին պատճէնները վերը կերևին, հայրախնամ ջանք ցոյց տուած է։

Ազգային Ժողովոյ 1872 ապրիլ 11-ի Տեղեկագրին պարունակած ցաւերն հետևեալքն էին.

ա. Օրէնքն ու արդարութիւնն ի գործ դնելու մասին՝ գաւառական պաշտօնէից ընդհանրապէս անփոյթ և անտարբեր մնալն և գանգատանաց քննութեան Խաթիլամի դրութեամբ կատարելովն՝ անոնց աւելի ևս զեղծանիլը.

բ. Գաւառական Արքունի ժողովոց թէշքիլաթի օրինաք կազմակերպութեամբն՝ անոր անդամակցութեան շահախնդիր անձանց առանձնաշնորհութիւն դարձած լինելը.

գ. Գաւառացի Հայուն՝ Իսլամաց մոլեռանդ մասին նախատանաց և թշնամանաց ենթակայ ըլլալը.

դ. Արքունի շինուածոց համար տարապարհակ վարիլն ու դրամական անիրաւ պահանջմանց ենթարկուիլը.

ե. Ճանապարհաց շինութեան պատրաստակաւ կեղեքուիլը.

զ. Պաշտպանեալ Միւլթէզիմներու ապօրէն պահանջմանց առջև՝ բերոց տասանորդը դրամով վճարելու բռնադատուիլը.

է. Նմանապէս՝ իւր ընտանեաց ուտեստին համար մշակած տան պարտիզի բերքէն տասանորդ տալ բռնադատուիլը.

ը. Բերքէն տրուած տասանորդն ինքն անձամբ Միւլթէզիմի շտեմարանը փոխադրելու բռնաբարուիլը.

թ. Միւլթէզիմը ժամանակին չգալուն համար՝ բերքն անձրևին տակ թողլով փտեցնելու և յետոյ փրտած բերքին վրայ ողջ արժէքով տասանորդ տալու բռնադատուիլը.

ժ. Միւլթէզիմն ու սորա գործակալներն իւր տան մէջ հիւնընկալելով ձրիաբար կերակրելու և պատսպարելու պարտաւորիլը.

ժա. Եւ երբեմն ալ մինչև իսկ եղանց լուծերու վրայ՝ տասանորդ անուամբ՝ այսչափ ցորեն տալու բռնաբարուիլն, ինչպէս տեղի ունեցած է Կարնոյ Նահանգին գաւառաց մէջ.

ժբ. Ասոնցմէ զատ՝ գաւառացի Հայուն Շահնազարգ կամ Էօլչէք-Հադգը ըսուած արգելեալ տուրքեր վճարելու բռնադատուիլը.

ժգ. Զինուորական տուրքէն՝ մեռնողաց, գաղթողաց և փախստականաց մասը վճարելու հարկադրիլը.

ժդ. Թէմեթիւ և Էմլաքի տրոց անարդար բաշխմամբ՝ Իսլամաց բեռը կրելը.

ժե. Տրոց վճարման պատրուակաւ՝ անհրաժեշտ կահկարասին ու գործիքը ծախելու, և մինչև իսկ ոստիկանաց ձեռօք ծեծուելու ու բանտ մտնելու խստութեանց մատնուիլը։

ժզ. Կիներու և անչափահաս մանկանց մահմեդական կրօնքն ընդունելու ստիպուիլը.

ժէ. Կիներու, հարսերու և նոյն իսկ աղջիկներու առևանգիլն ու բռնաբարուիլը.

ժը. Ոչ-մահմեդականաց վկայութեան չը բռնվելովն՝ առևանգութեանց, գողութեանց և սպանութեանց անյայտ ու անպատիժ մնալը։

ժթ. Զինեալ քրդերու, լեռնցի ցեղերու, չէրքէզներու և բնիկ թուրք տէրէպէյիներու այլ և այլ հարստահարութեանց ներքև հայ ժողովրդեան տառապիլն ու չարչարիլը։

Ահաւասիկ՝ այս չարեաց բարձմանն համար՝ յիշեալ Տեղեկագրին մէջ ցոյց տրուած դարմաններն ալ.

ա. Պարտաքանց գաւառական պաշտօնեայն պաշտօնէ ձգել և ուրիշ գաւառի մէջ պաշտօնի չը կոչել.

բ. Խաթիլամի եղանակը բարեփոխել, Կառավարութեան և Ազգին կողմանէ կարգեալ լիազօր քննիչներ ղրկելով ի գաւառս

(Այս խնդիրը ս. Պատրիարքի ձեռօք վերջին անգամ բարձրագոյն Եպարքոսին առաջարկեալ դարմաններուն մէջ ալ կրկնուած է)։

գ. Գաւառական Ազգային Վարչութեանց և Առաջնորդաց առ Տեղական Կառավարութիւնս մատուցած թագրիրները լրջօրէն նկատողութեան առնուլ և արդարութիւնն անմիջապէս ի գործ դնել.

դ. Գաւառաց Մէճլիսի-Իտարէ, Մէճլիսի-Տաւվի, Թէմեթիվի-Հուգուգ և Մէճլիսի-ճինայէթ անուն վարչական և դատական ժողովներուն հայազգի անդամոց ընտրելիներն՝ Ազգ. Գաւառական Վարչութեանց ձեռօք պատրաստել տալ.

ե. Բ. Դրան հրամանագրերն իւրաքանչիւր Կուսակալութեան պաշտօնական լրագրաց մէջ հրատարակել.

զ. Տիւսթուրն ամեն ազգաց լեզուի վերածել և ժողովրդաց մէջ տարածել.

է. Կրօնափոխութեան դիմողներու վերաբերեալ օրինաց մէջ որոշ տրամադրութիւններ դնել, և կրօնափոխներն իրենց համոզումն յայտարարելու գործին մէջ ճնշումէ ազատ պահել.

(Ս. Պատրիարքի ձեռօք վերջին անգամ բարձր Եպարքոսին առաջարկեալ դարմաններուն մէջ ալ այս խնդիրը կրկնուած է, 21 տարին չը լրացուցած կրօնափոխութեան դիմողին՝ դաւանութիւնն ու խօսքը չը բռնելու պայմանաւ)։

ը. Կրօնափոխ արանց համար՝ իրենց կնոջ և զաւակաց օրապահիկ (նաֆագա) վճարելու օրէնք մը սահմանել.

թ. Արքունի ամեն տեսակ տուրքերն արդարութեամբ բաշխել և օրինաւորապէս հաւաքել.

ժ. Անվճար Պագայէնները շնորհել.

ժա. Հողագործութեան զարգացմանն համար՝ հողագործաց ամեն կարևոր ապահովութիւնները տալ։

(Ս. Պատրիարք Հայրը՝ վերջին անգամ առ Բարձր. Եպարքոսն առաջարկած դարմաններուն մէջ՝ այս խնդիրն ալ կրկնած է, մասնաւորաբար բացատրելով՝ հողագործաց իրենց մշակած հողին տէր ճանչելու պէտքին կարևորութիւնը)։

ժբ. Հարստահարիչ քրդաց և աշիրաց գլխաւորներն ու թիւրք տէրէպէյիներն իրենց որջացած տեղերէն հանել ու պատժել, և բոլոր լեռնցի վրանաբնակ ցեղերն ի հնազանդութիւն բերելով գիւղաբնակ ընել և ասոնց՝ ինչպէս նաև չէրքէզներու՝ ձեռքէն սուրն ու հրացանն առնելով, մաճ և հովւական ցուպ կրելու վարժեցնել զանոնք. տեղական ոստիկանութեան պաշտամանց մէջ անխտիր հայեր ալ դնել, և կամ հայ ժողովրդեան արտօնութիւն տալ իրենց կեանքն ու պատիւը զէնքով պաշտպանելու։

(Տէրէպէյիներու պատժելին ու հեռացուցելին ալ ս. Պատրիարքին առ Բարձր. Եպարքոսն ներկայացուցած առաջարկութեանց մէջ կրկնուած է)։

ժգ. Ոչ-մահմետականաց վկայութեան բռնելին և անոնց կալուածական, առևտրական և ոճրագործական որևէ խնդիրներուն միայն նիզամի ատեաններու առջև դատելը։

(Ոչ-մահմետականաց վկայութեան խնդիրն ալ՝ վերջին անգամ ս. Պատրիարքին առ Բարձր. Եպարքոսն առաջարկած դարմաններուն մէջ կրկնուած է)։

(Կը շարունակի)

ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

ԺԱ.

ԹԻԱՐԱՆՆԵՐՈՒ ԽՈՐԵՐԷՆ

Այսօր եօթը լարերն եմ բարկութեան և մարանչումի քնարիս,
Եւ հեծեծանքս և մտածումս և եղբայրական աչքերս և հաւատքս մոլեռանդ
Ձեզի կը բերեմ, ձեզի կը խնկեմ, ձեզի կը մատուցանեմ, ո՜վ կենդանի մեռեալներ,
Ո՜վ թիապա՛ռներ, ո՜վ աքսորեա՛լներ, հայրենակարօ՛տներ, կալանաւո՛րներ,
Դուք որ մահուան մէջ կ'ապրիք և կեանքին մէջ ամեն վայրկեան կը մեռնիք,
Դուք որոնց արդար սուրերուն տեղ այսօր՝ ձեր վրայ, ծանրածանր շղթայներն են որ կը փայլին...
Դուք որոնց աչքերուն վրէժի կայծը, վրէժի չի թափուող արցունքներու փոխուեցաւ,
Եւ, ափսո՜ս, դեռ չի դար, դեռ չեկաւ, լայնածիր յոյսն անբարբառ,
Ձեր անդրակարօտ և անեղբայր հոգիներուն առջևը ժպտելու...
Եւ տարիներով իրիկունները, շքեղորէն, հայրենիքին վրայ արիւնեցան,
Եւ մարտիրոսներու և թշնամիի արիւններէն կարմիր,
Տարիներով արշալոյսները ծաղկեցան և մոխիրին և անշէջ հաւատքին վրայ
Բայց ճառագայթ մը չեկաւ, հոգի մը չեկաւ, երկու շրթունքներ չեկան,
Ձեր մութին մէջ շաւիղ մը երկարելու կամ փրկութեան խօսք մը փսփսալու...

Գիտեմ թէ ի՜նչ ապառաժեայ խաւար է որ կը լեցուի ձեր զնդաններուն մէջն անողորմ,
Եւ ի՜նչ դաժան երազներ կուգան իրենց ժանիքներովն ձեր ուղեղը բզքտելու...
Ի՜նչ տառապանք և ի՜նչ սէր, ի՜նչ ինքնամբրկում և ի՜նչ հառաչանք ձեր ներսիդին,
Ի՜նչ յոյսի երկինքներ, ինչ ծարաւ կապոյտի, ինչ ձայն և ի՜նչ քրքիջ և ի՜նչ լռութիւն,
Ձեր հոգիին մէջ կարգ առ կարգ և տարուէ տարի և յաւիտենապէս կը թաւալին։
Եւ կըսկսիք երազել, ձեր գլխուն բովանդակ ցաւը ձեր դողդոջուն ձեռքերուն յանձնած...

Ահաւասիկ որ ձեր ազատ քայլերն կանանչ մարգագետիններ կը կոխտեն,
Եւ գերագոյն կապոյտը երկնքէն վար, լիճերու պէս, դէպի ղձեզ կը հոսի...
Ձեր աչքերը հողին հովիտներուն գեղեցկութիւններէն կարցունքոտուին,
Եւ ծարաւի բերաններնիդ հայրենական աղբիւրներու յստակ ջուրին կը մօտենան...
Ցորեանի դաշտերն, ծով առ ծով, ձեր աչքերուն տակ, կեանքին հացը կալեծփեն...
Եւ ձեր այգին իր առատ աշուններուն քաղցրութիւնը ձեզ կընծայէ...
Լռութիւն մը մահասարսուռ։ Երկու քայլ ևս և արևնե՛ր, արևնե՛ր, արևնե՛ր պիտի ծագին...
Արիւննիդ կեռայ։ Տեղ մը կարօտ համբոյր մը ուրիշ համբոյրի մը կը սպասէ,
Տեղ մը արցունքներ կան որ կուզեն ուրիշ արցունքներու մէջ իրենց հուրը թափել...
Տեղ մը բազուկներ կան ձեր յոգնած գլխուն շուրջը իբր պակ բոլորուող,
Տեղ մը թոնիր մը կայ, երդիք մը, յիշատակ մը, ծառ մը, աղբիւր մը որ կը վազէ և առուակ մը որ կը փախչի..
Տեղ մը սիրտեր կան, դորոշներ կան, գարուններ կան, և կեանքը կայ վերջապէս,
Եւ դուռը բախտին հովէն կը բացուի և խարխափելով ներս կը մտնէք...
Սեմին վրայ դեռ քանի մը կաթիլ արիւն և ծիծեռնակի մը երգը տանիքին կտուրին մէջէն...
Եւ ստուերներ ծնրադիր ու բազկատարած որ անհաւատալի բանի մը կըսպասեն։
Եւ ահա անդնդախոր ճիչ մը ձեր անօգնական և հրաշալի հոգիէն,
Եւ, ո՜վ սոսկում, անշրջան և անվերջ շռինդը ձեր տասնամեայ շղթայներուն,
Որ ձեզի հետ կարթննայ, և ձեր ոսկորներուն վրայ, իր օղակները, կատաղորէն իրարու կը զարնէ..

Աւա՜ղ, աւա՜ղ և հովիտ և հայրենիք և աղբիւր և յիշատակ և համբոյր,
Նորէն բերդերուն և բանտերուն եղեռնական գաղտնիքին խորը կը մխրճին,
Եւ ժամանակը հոդ է միայն որ իր առանցքին վրայ այլ ևս չի թաւալիր,
Հոդ է միայն հեծեծանքներու հեծեծանքին անհունապէս աղետալին...
Հոդ է սանդարամետեան մորմոքը, լռին լաց ու կոծը, չի՛ մեռնող կեանքն և չի՛ ծնող մահը...
Հոդ է որ ազատութեան ակնապիշ աչքը գերեզմանի հողովը կը լեցուի...
Հոդ է որ արցունքը բիբերէն յե՛տ կը դառնայ, ուղեղին մէջ հսկելու համար...
Հոդ է որ անհոգութեամբ միսեր կը խարանեն և անհոգութեամբ ոսկորներ կը փշրեն,
Հոդ է այլուրին ծարաւը, գիտցուածին անգոյութիւնը, և փախուստը կարմիր փորձութիւններուն,
Այդ որմերուն տակն են, հիմնաքարերուն հաւասար, և մութին մէջ խեղդամահ՝
Անոնք որ օր մը, փառքի օր մը, պատմութեան օր մը, սր մը հերոսութեան,
Զարիքին օրէնքները պատառեցին արդարութեան առաւօտի մը ի խնդիր,
Անոնք որ իրենց անձը զոհել ուզեցին Գաղափարին խորանին առջևը կանգուն,
Անոնք որ թշնամիի սուրին դիմաց, մեր կեանքին համար, իրենց սուրը շողացուցին,
Անոնք որ ցեղին սարկութեան շղթայները, ցեղին ուսէն, իրենց ուսերուն վրայ վերցուցին...

Ո՞ւր են ուրեմն, ո՞ւր են մեր բազուկները, մեր կամքերը, մեր մուրճերը, մեր հարուածներն ազատաբեր,
Ո՞ւր է մեր սէրը, ո՞ւր է մեր խիղճը, մեր վաղքը, մեր զայրոյթը շանթածրար,
Եւ ե՞րբ, ե՞րբ պիտի վար շրջենք, ե՞րբ պիտի խորտակենք, ե՞րբ պիտի փշրենք
Մահուան դուռներն այդ բանտերուն, երթալ յա՛ իշատակելու, երթալ համբուրելու համար
Այդ յաւիտենական հերոսները, որոնք մեր կեանքի իրենց կեանքէն, անհունապէս աւելի սիրեցին.
Որոնց մէջ թերևս երեկուան սէրը մեռնի վաղուան անէծքը ծնեցնելու համար...
Ուրեմն ո՞ւր էք Բռունցքներ, ո՞ւր էք Բարկութիւններ, ո՞ւր էք Խորտակիչներ, ո՞ւր էք, ո՞ւր...։

ՍԻԱՄԱՆԹՕ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴ

ՏԷՐՐՕՐ

Փայաջուկցի յայտնի մատնիչ Սմբատ Սևոսեանը, անցեալ ծմեռայ անյաջող տէրրօրից յետ, հակառակ իր զղջման՝ նորից բռնուելով իր նախկին վատ ընթացքի մէջ, երկրորդ անգամ տէրրօրի ենթարկուեց Սաւրայում, օգոստոսի 4-ին։ Մահը վայրկենական էր, տէրրօրիստը ազատ է։

Հ. Յ. Դ. ԱՏՐ. Կ. ԿՕՄԻՏԷ

ՆԻՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Պիւրօն ստացած է՝

Զուիցերիա.—Նէր անյայտից 20 ֆր., տիկին Ա.-ից 20 ֆր., տիկին Ա-ից 10 ֆր.:

Ռուսաստան.—„Դրամ“ կոմիտէից 5000 ֆրանկ:

Գումար 5050 ֆրանկ:

Մրզաստանի կենտր. կոմիտէ՝

Շարունակութիւն № 8-ի:

ԱՌԱՏ ԳԵՏԻ ՇՐՋԱՆ՝ Հեռեւեալ գիւղերից Շէն 417. 30, Սպիտակաւէն 175. 6. Հրազդան 111. 20, Պոլիս 165. 10· Գումար 868 ր. 66 կ.:

ԱՐԱՐԱՏԻ ՇՐՋԱՆ՝ Հեռեւեալ գիւղերից՝ Բարաիթ 190 ր. 60 կ., Հողակոյս 173· 66, Կենտրոն 2400. 12, Գէորգ 38, Պարտանանաչ 116. 60, Պաւանդան 116. 60, Սեւ քար 83. 95, Ժայռ 38. 75, Լեռնալանջ 20. 30, Պտղաբեր 47. 20, Միջագետ 20. 80, Հայազէն 18. 65, Գեղեզր 32. 80, Խառնակ 4. 45, Ծաղիկ 5· 70, Հանգանակութիւն 154· 50: Գումար 3462 ռուբլի 73 կոպէկ:

ԱՐՄԱՒԻՐԻ ՇՐՋԱՆ՝ Հեռեւեալ գիւղերից՝ Սալբանդ 386. 80, Շան 95. 20, Ջլի 101. 45, Պարսպապատ 403. 95, Այծրլու 120. 25, Արմաւիր 153. 40, Գայլաբուն 435. 55, Գառաբուն 1211. 05, Մեծ տուն 10, Կարմիր քար 130. 02, Օձաբուն 18, Կռունկի բոյն 140 05, Ալեկոմ 26· 80, Անյայտ 169, Առազանի 17, Լճանի 8. 40, Շ. 50, Ազրայել 354. 20: Գումար 3831 ռուբլի 12 կոպէկ.

ԱՐՓԱՔԱՅԻ ՇՐՋԱՆ՝ Հեռեւեալ գիւղերից Գեսազուխ 163. 26, Անվախ 378. 36, Ադբիւր 75. 40, Բարագուխ 16, Փոքր 19 50, Կանսու 18, Շրջանից 30, Ձկնորս 10, Շէն 16. 80, 6 խմբերից 126.05, Կանսու 18. 50, Շրջանից 30. 50, Ս. գիւղից նուէր 57. 50, Դաշտից Ադունից 40, Ս. Ճանապարհորդից 10, Ադայից եւ իր ծառայից 30, Էոսից նուէր 10, Նէրներ 205· 10 Գումար 1208 ր· 47 կ.:

ԲԱՐՁՐ ՏԵՂԻ ՇՐՋԱՆ՝ Հեռեւեալ գիւղերից Բարձր տեղ 1940. 46, Ոսկէ հանք 84. 25, Վանք 12. 95, Բարակոյս 16. 75, Դաշտ 24. 95, Կալաւծք 14. 90, Ծաղկասար 35· 40, Կոկոն 12. 15, Վայր գիւղ 38. 90, Խաս ձոր 8. 50, Սիսեռ 1. 50, Անդրանիկ 1. 15, Սաճալի իւրս 7. 50, Շեմարան 8. 10, Ղանչավար 13, Ձորագեղ 2. 45, Բաղէցի 5, Բ. Տեղ. Գ-ի խմբերից 34. 85, Գումար 2262 ր. 76 կ.:

ԴԱՍԲԱՇԻ ՇՐՋԱՆ՝ Հեռեւեալ գիւղերից Դառբաշ 38. 90, Մարտաղաշ 3. 10, Սինասար 3. 30, Դառբաշ 249· 91, Մարտաղաշ 28. 30, Նորաղաշ 25. 80, Սինասար 10. 90, Անապաս 23. 30, Աւդալարից 11: Գումար 394 ռուբ. 51 կոպէկ:

ԼՃԱՓԻ ՇՐՋԱՆ՝ Հեռեւեալ գիւղերից Ղազուլու 10, Ուռենի 66. 40, Նորաւան 20, Թրմակիրն 65. 80, Սեծամոր 14. 40, Իշխանաշէն 34. 75, Խաչէր 20. 90, Թրմապաս 23. 50, Վերին քարափ 16. 20, Հնաշէն 3, Ազաս քաղաք 14. 35, Ակնախառ 8. 95, Լեռնաղաշ 47. 25, Հայաշէն 17, Ծառաձոր 27. 10, Քարաձորակ 21. 15, Վարդենոց 31. 95, Լեռնալանջ 10. 25, Գեսնափոր 10. 70, Թնդանոթ 3· 85, Կամուրջ 10. 55, Սպիտակ ձոր 14. 80, Ժայռ 33. 10, Մթնաձոր 35. 90 Գոռ 14. 10 Խաչի ձոր 4. 85, Սրբավայր 10. 25, Գանձակ 19. 80 Ակնախոր 9. 5, Լիճ քաղաքից 377. 12, Ներքին քարափ 13.40, 2 խ-ից Տիրան խ.-ի խմբապետի ժողոված 15, 65: Գումար 1026 ր. 7 կ.:

ԾԱԼԿԱՁՈՐԻ ՇՐՋԱՆ՝ Հեռեւեալ գիւղերից Կապուս խաչ 193. 50, Շան-չ. 6, Հալապ 61. 75, Ջորաւոր 112. 40, Ցանգ 2. 50, Գնուծ 215. 20, Տէրտամանայ 153. 30, Նորաշէն 28. 55, Ջորա-գիւղ 54. 65, Ուռաղեան 48. 45, Արեւագոյն 8. 45, Տալորիկ 168· 75, Վառաստր 41· 50, Ծիրանաւորս 33. 70, Բարոս 7. 50, Նաւա 14. 15, Բարաբերդ 29. 78, Կապուս լեր 20. 20, Նորաբոյս 11. 65, Գեղամայ 23.67, Փառանձակերտ 32. 90, (խլած) Շրջանի խաչագողից 9, Շրջանի խրնջոյրից 230: Գումար 1507 ր. 55 կ.:

ԿԱՐԻՆԻՍԻ ՇՐՋԱՆ՝ Կարմիր գ. 26. 71, Ցամաք 4, Հրազդան 11. Կարմիր գ. 155· 19 Ցամաք 86. 20, Բարանձաւ 136. 22, Ծաղկաւարք 8. 10, Տալորիկ 45, Հրազդան 60. 60 Գողթան 32. 20, Թէզ 20. 99: Գումար 587 ր. 16 կ.:

ՁՈՐԻ ՇՐՋԱՆ՝ Ձոր գիւղ 69, Հազարեակ 24. 65, Հարուրեակ 10, 40, Անտառ 7, Ձոր գ. 360. 57, Անտառ գ. 66. 87, Տասնեակ 31, Հարուրեակ 36. 24, Հազարեակ 101. 20, Աւան 52. 23: Գումար 759ր. 5 կ.:

ՆԻՐԻ ՇՐՋԱՆ՝ Հեռեւեալ գիւղերից՝ Վարտեղ 2. 70. Ցից քար 1. 55, Բիւլբուլայ 27. 60, Բարսան 30. 5, Ցոլակ 6, Վինակ 104. 35, Բարսան 120. 84, Ապառաժ 9. 12, Ուխտաւոր 26. 30, Ղուզի 2, Աղաշկերտ 51. 84, Բիրայ 19. 33, Գոմանոր 9. 20, Ա. գիւղ 67. 84. Բ. գիւղ 7. 50, Վարդի եզր 28. 90, Գոլ 4. 45, Վարդանանց 21. 27, Շրջանից 1. 50, Շրջանից խանասորի տնին նուէր 5: Գումար 547 ր. 34 կ.:

ՋՐԱՌԱՆԻՍ ՇՐՋԱՆ՝ Հեռեւեալ գիւղերից՝ Փրկիչ 36. 50, Արամայիս 15. 75, Գարինի 97. 93, Կիրն 5· 70, Աւարայրի 13. 90, Խաչ քար 17· 70, Կամիսար 54. 45, Բարանոր 6. 20, Բարաձայր 5. 70, Օվացիս 11. 95, Կաքնաղբիւր 6. 15, Ամառանոց 57. 50, Արմաւիր 88. 79 Կազբէկ 27. 65, Ջէյթուն 5. 50: Գումար 451 ր. 37 կ.:

ՎԱՐԵՄԱՐԳ ՇՐՋ. Նուէր եւ խմբերից 23. 70, Աղօթ գիւղից 300 Գումար 323 ր. 70 կ.:

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՇՐՋԱՆ՝ Սրբավայրից 64. 30, հեռեւեալ գիւղերից Հողաձին 14, Պուշեան 29, Միջագիւղ 8. 50, Բոր 36. 30, Հողաձին 34. 90, Շրջանից 21. 65, Արմաս 15. 75, Խառն 1· 10, Աղաւնաբոյն 42. 80, Սրբավայր 171, Ծառ 7. 50, Առւայ 50 կ. Բարանի 72. 5, Ծաղկանոր 5. 30, Գեղեցիկ 2. 45: Գումար 527 ր· 10 կ.:

ՏՐՏՈՒՄԻ ՇՐՋ.՝ Հեռեւեալ գիւղերից՝ Դաշտամէջ 43. 25, Սեւ խաչ 21. 75, Խնկանոր 14. 30, Կուսաղաշ 282. 30, Բանակաւեղ 54. 75, Ուխտաբնակ 86. 79, Սմոյի 11· 20, Թռուցիկ 25. 60. Ութնան 66. 55, Հայկազեղ 4. 95, Սոմրոյ 151· 50, Մեղրաձոր 14. 15, Սպնի 13. 20, Սպիտակ վանքից 15, Շրջանից 63. 30, Լուցանոր 70. 75: Գումար 939 ր. 34 կ.:

(Կը շարունակուի)